

ԼՈՒՅՍ

Մշակութային և հասարակական ամսագիր

لویس

LOUYS

Armenian Monthly

ISSN 1682-5446

Հոկտեմբերի 27-ը Հայաստանի Հանրապետության Պատմության ամենասուեւ էջն է



180, Հոկտեմբեր 2013 թ. No 180, October 2013 شماره ۱۸۰ مهر ماه ۱۳۹۲

Այս համարում

Հայերեն բաժին

1- Հայաստան.....	1
2- Արցախ.....	10
3- Արեւմտյան Հայաստան.....	11
4- Միջազգային.....	15
5- Հասարակական.....	16
6- Մշակույթ	19
7- Խոհեր.....	25
8- Գծանկարչություն.....	25
9- Հայերեն-պարսկերեն առածանի.....	25

Պարսկերեն բաժին

1- Լուրեր.....	1-2
----------------	-----



Ճապիկի առաջին էջում՝ Հայրենի Երիտասարդությունը մեր ապագան կերտող միակ հույսն է

Վերջին էջում՝ Լույս է տեսել Էդ. Բաղդասարյանի «Հայ Պետականության Պատմություն»-ը 7 հատորով Իրանահայ Համայնքի Ամբողջական Պատմությունը 10 հատորով

Համար 180, հոկտեմբեր 2013 թ.
No. 180, October 2013

ماهنامه لویس - شماره ۱۸۰ مهر ماه ۱۳۹۲

ԼՈՒՅՍ

Մշակութային եւ հասարակական ամսագիր

Արտոնատեր եւ գլխավոր խմբագիր՝

Էդ. Բաղդասարյան

Փոստարկը 15875-9488 Թեհրան - Իրան

Էլեկտրոնային փոստ՝ louys_monthly@yahoo.com
Ինտերնետային հասցեն՝ www.louysonline.com

LOUYS

Armenian Cultural and Social Monthly

License-holder and Editor-in-Chief

Ed. Baghdasarian

www.Edic-Baghdasarian.com

POBox 15875-9488 Tehran – Iran

E-mail : louys_monthly@yahoo.com

Internet : www.louysonline.com

Թերթի Գինը՝ Հատվածաճառ - 5000 ռիալ
Բաժանորդագրություն՝

Իրան՝ մեկ տարի՝ 60,000 ռիալ

Արտասահման՝ մեկ տարի՝ 50 ԱՄՆ դոլար

Հոդվածների հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել խմբագրության տեսակետներին:
Արտատպության դեպքում հղումը «ԼՈՒՅՍ» - ին պարտադիր է:

Հայաստանի եւ Արցախի անկախության հռչակագրերը

Մի դրվագ Էդիկ Բաղդասարյանի՝
Հայ Պետականության Պատմության
6-դ հարորից

1990 թ. օգոստոսի 23-ին Հայաստանի Գերագույն խորհրդի առաջին նստաշրջանն ընդունեց «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին», որով Հայաստանի անկախացման գործընթացի սկիզբը դրվեց: Իսկ 1991 թ. սեպտեմբերի 2-ին հռչակվեց Արցախի անկախությունը:

Հռչակագրի քաղաքական բաժնում նշվում էր, որ ՀԽՍՀ-ն վերանվանվում է Հայաստանի Հանրապետություն (Հայաստան): Այսպիսով, Հայաստանի պատմության մեջ սկսվում էր երրորդ հանրապետության շրջանը: Կարելու է նշել, որ թեեւ Խորհրդային Հայաստանը դեռեւս ԽՍՀՄ կազմում էր եւ չէր օգտվում իրական պետական անկախությունից, սակայն այդ շրջանում ձեռք բերված հաջողությունների հիմքի վրա էր, որ հնարավոր եղավ կյանքի կոչել երրորդ հանրապետությունը:

Այսպիսով, «անկախությունից» հետո հանրապետությունը՝

1- Կորցրեց նախկին 70 տարիների ընթացքում ձեռք բերած արդյունաբերական, տնտեսական, գյուղատնտեսական, գիտա-կան, մշակութային եւ հասարակական ապահովության խոշոր նվաճումները:


2- Երկրից հեռացան, եւ շարունակում են հեռանալ, ամենաաշխատունակ տարիքի մասնագետներ:

3- Տեղի է ունենում հայաթափում՝ ժողովրդի արտագաղթի հետեւանքով: 2013 թվականի դրությամբ երկրից հեռացել է բնակչության 32 տոկոսը, շուրջ մեկ միլիոն մարդ:

4- Եթե Սովետական շրջանում երկիրը կառավարվում էր շինարար ձեռքերի միջոցով, եւ պարզ հնգամյակների տնտեսական ծրագրերով, ապա այս նոր շրջանում երկրի տնտեսական, եւ բնական ռեսուրսների ակնհայտ թալանով, երկրի ամենակարեւորագույն տնտեսական ճյուղերի տրամադրումը օտար պետություններին ու մասնավոր ձեռնարկություններին:

5- Հայաստանի բնակչության մեծամասնությունը հասարակական-տնտեսական առումով հասցվել է աղքատության աստիճանի: Անգործությունը հասել է սարսափելի աստիճանի, թեեւ դանդաղորեն դեպի բարելավում է գնում:

6- Երկրում օրեցօր ավելի է զարգանում թմրաբիզնեսը: Եթե սովետական ժամանակ երիտասարդությունը ուներ բազմաթիվ ընտրություններ առողջ ապրելակերպ ստեղծելու համար, ապա այս նոր շրջանում նրա մի մասը ընկել է թմրամոլության սարսափելի ճիւղաններում:



7- Այդ նոր շրջանում ժողովուրդը ապրել է հասարակական ամենամաստացուցիչ պահեր, անբարոյականությունը արագորեն զարգացել է երկրում, մինչև այն աստճանի, որ տարածվել է երկրից դուրս, Թուրքիա, Իրան, Արաբական իմարեթներ եւ այլ վայրեր:

8- Բազմաթիվ հայ մարզիկներ թողնելով հայրենիքը օտար դրոշների ներքո են պայքարում իրեց մարզական բնագավառներում:

9- Նոր հանրապետական շրջանում, երկիր են թափանցել զանազան լրտեսական, աղանդավորական, գաղտնի եւ մոլթ տեղերից հովանավորվող խմբեր ու խմբակներ, որոնք նպատակ ունեն երկիրը տանել դեպի կործանում:

10- Նոր շրջանում երկիրը անկում է ապրում իրավական ոլորտում: Տեղի են ունենում իրավական, մարդկային իրավունքի ոտնահարումներ, սպանություններ նույնիսկ Հայոց բանակում, հասարակական ապահովության թուլացում, բավական է վերհիշել 1991 թվականից հետո տեղի ունեցած ահբեկչության եւ անհատների տեւորի ցուցանիշներին: Այս մասին կան բազմաթիվ փաստեր ու վկայություններ, որոնց ուսումնասիրությունը պահանջում է առանքձին մի աշխատանք:

11- Նոր շրջանում հայկական գիւղերում, մշակույթն ու գրականությունը մեծ անկում ապրեց: Եթե սովետական ժամանակ գրքերը հրատարակվում էին մի քանի տասնյակ հազար տպաքանակով, ապա նոր շրջանում պակասել է թե՛ տպաքանակը եւ թե՛ հրատարակվող գրքերի թիվը: Շատ գիտնականներ, մասնագետներ, մշակույթի գործիչներ, համալսարանի դասախոսներ նույնիսկ ակադեմիկոսներ հայտնվել են փողոսում, նրանցից ոմանք արտագաղթել են Եվրոպա եւ Հյուսիսային Ամերիկա թշվառականի կարգավիճակով:

12- Հայաստանի ժողովուրդը երախտամոռ հանդիսացավ իր սովետական շրջանի ազգանվեր դեկավարության հանդեպ: Անկախության հենց սկզբից, փոխարեն ընտրեց հայ նոր գարթոնքի հիմնադիրներին, նախընտրեց մոլորությունը ձայն տալ օտարամոլ, օտարի գործակալ անհատներին, որոնցից էր առաջին նախագահը:

Հայաստանի Հանրապետության շնորհիվ կատարվել է հետեւյան ձեռքբերումները.

1- Հայաստանը մաքրվել է թուրք-ագերի հինգերորդ շարասյունից, ի նկատի ունենալով վերջինների բնակչության գերբնական բարձր աճը, երկիրը փրկվել է հետագա անվտանգություն մեծ դժվարություններից:

2- Այս շրջանում իր արդյունքին հասավ դեռեւս սովետական շրջանից սկսված ազգային-ազատագրական պայքարը՝ ազատագրվեց Արցախը: Իրականություն դարձավ հայոց մեծ իղձերից մեկը:

3- Հայաստանի հանրապետությունը դե յուրե ճանաչվեց աշխարհի երկրների եւ միջազգային կազմակերպությունների կողմից որպես անկախ պետություն:

4- Այս շրջանում սփյուռքահայությունը առիթ ընձեռնվեց այցելելու հայրենիք, նրանց տրվեց Հայաստանի քաղաքացիություն շնորհվելու հնարավորություն: Որի արդյունքում հարյուրավոր սփյուռքահայեր վերահաստատվեցին հայրենիքում:

Յուկտեմբերի 27-ը՝ Հայոց նորագույն պատմության սեւ էջից մեկը



Հանրապետության վիճակը ծանրացավ 1999թ. հոկտեմբերի 27-ի նախադեպ չունեցող ահաբեկչությանը, երբ խորհրդարանի շենքում գոհվեցին ՀՀ վարչապետ Վազգեն Սարգսյանը, ՀՀ Ազգային ժողովի նախագահ Կարեն Դեմիրճյանը, ԱԺ փոխնախագահներ, պատգամավորներ: Դա ծանր հարված էր ժողովրդավարությանը: Ահաբեկչությունը հանգեցրեց հանրապետության ներքաղաքական իրավիճակի կտրուկ սրման: Սակայն, այնուամենայնիվ, հանրապետության ղեկավարությունը կարողացավ աստիճանաբար կայունացնել իրավիճակը: Անկասկած, եւ ըստ գոյություն ունեցող անփախելի փաստերի, այդ ուճազործություն մեծ պատասխանատու են ժամանակի գործող նախագահը, անվտանգության ծառայության նախագահը, Ռուսաստանի եւ Ամերիկայի

Հետախուզական ուժերը եւ Դաշնակցութիւնը: Այդ ազգազաւ օճրագործութեան իրագործելու մեջ վերջինիս մասնակցելու կապակցութեամբ, գոյութիւն ունեն անժխտելի փաստեր: Հայաստանի պետականութեան պատմութեան մեջ դա ամենա- սեւ էջերից մեկ է, որի մանրամասն վերլուծումն ու նրա իսկական մասնակիցների մասին տվյալների ներկայացումը պահանջում է առանձին հոդված կամ մենագրութիւն:

Խոսում են Պետական ոճրագործները

Ռոբերտ Քոչարյանի ցուցմունքները Հոկտեմբերի 27-ի քրեական գործով



Հաշվի առնելով 1999թ. հոկտեմբերի 27-ի իրադարձությունների և դրան հաջորդած զարգացումների նկատմամբ ոչ միայն չարող այլև աճող հետաքրքրությունը, սկսում ենք հրապարակել Հոկտեմբերի 27-ի քրգործով այսօրվա քաղաքական դաշտի առանցքային գործիչների ցուցմունքների հրապարակումը: Շարքը սկսում ենք այդ ժամանակ գործող նախագահ Ռոբերտ Քոչարյանի հարցաքննությունից:

3.12 գ.թ. 47-55 ՌՈՒԲԵՐՏ ՍԵՂՈՒԿԻ ՔՈՉԱՐՅԱՆ
15.05.2000թ. Հայաստանի Հանրապետության նախագահ
17.00.-20.00. քննիչ Ս. Մաթևոսյան
գ.թ.47

Առաջարկելով պատմել բոլորը,ինչը որ հայտնի է իրեն դեպքի և գործի հանգամանքների առնչությամբ, Ռ.Ս.Քոչարյանը ցույց տվեց հետևյալը.
գ.թ.48

Չոհված տուժողներից Վազգեն Սարգսյանին ճանաչել եմ 1989-90թթ.-ից: Նրա հետ գտնվել եմ ընկերական,բարեկամական հարաբերությունների մեջ: Կարեն Դեմիրճյանին անձնապես ճանաչել եմ 1997թ. ապրիլ-մայիս ամսից,իմ ՀՀ վարչապետ նշանակվելուց մոտ մեկ ամիս անց,Հայաստանի արդյունաբերողների հետ հանդիպման ժամանակ,հարաբերությունները եղել են նորմալ՝ հիմնված փոխադարձ հարգանքի վրա:

Յուրի Բախշյանին ճանաչել եմ ավելի վաղ,երբ քաղաքապետի տեղակալն էր,կարծեմ քաղաքապետ Վ.Խաչատրյանի օրօք: Եղել են ջերմ,մոտ հարաբերություններ:

Ռուբեն Միրոյանին ճանաչել եմ նրա ԱԺ նախագահի տեղակալ ընտրվելու կապակցությամբ:

Լեոնարդ Պետրոսյանին՝1988թ.-ից,Ղարաբաղից: Արմենակ Արմենակյանին ճանաչել եմ շարժումից,90-ական թվականներից:

Հենրիկ Աբրահամյանի հետ չեմ առնչվել: Միքայել Քոթանյանին ճանաչել եմ 97թ.-ից,իմ վարչապետ աշխատելու ժամանակ:

Մարմնական վնասվածքներ ստացած տուժողներից Հայկ Նիկողոսյանին ևս այդ ժամանակվանից:

Արմեն Խաչատրյանին՝ ԱԺ նախագահ ընտրվելուց հետո:

Անդրանիկ Մանուկյանին ճանաչել եմ վարչապետ աշխատած ժամանակվանից:

Էդմունդ Ծատուրյանի հետ չեմ առնչվել,նրա մասին լսել եմ դեպքի կապակցությամբ:

Պավել Դալթախյանին՝97թ.-ից,երբ դեռ նախարարի տեղակալ էր:

Հերմիտ Նաղդալյանին ևս ճանաչել եմ 97թ.-ից:

Մեղադրյալներից Նաիրի Հունանյանի մասին կարող եմ ասել հետևյալը,դեպքից հետո ԱԺ-ում մեր հանդիպման ժամանակ ևս հիշեցրեց ինձ,որ 1988թ. Ստեփանակերտում,ես լինելով Ղարաբաղի Մետաքսի կոմբինատի կուսկոմի քարտուղարը,ընդունել եմ ուսանողների մի խումբ Երևանից,և որ ինքը այդ խմբում էր: Որևէ այլ շփումներ իր հետ չեմ ունեցել:

Ալեքսան Հարությունյանի հետ ծանոթացել եմ դեռևս 93թ.-ին, երբ նա աշխատում էր Ֆրանսիայում Հայաստանի դեսպանատանը,իմ Ֆրանսիա կատարած այցելության ժամանակ:

Հարություն Հարությունյանին ըստ Եւրոյան չեմ ճանաչում:Ինձ հիշեցրել են,որ իմ վարչապետ կամ նախագահ աշխատելու ժամանակահատվածում սկաուտական շարժման հետ կապված ինչ-որ ֆորումի ժամանակ ընդունել եմ խմբով,որը ես չեմ բացառում:

Նաիրի Բաղալյանի մասին լսել եմ ընտրությունների ժամանակ՝ կապված սոցիոլոգիական հետազոտությունների հետ,սակայն հանդիպում չի եղել, նրան չեմ ճանաչում:

գ.թ.49
Մուշեղ Մովսիսյանին չեմ ճանաչել,նրա անունը առաջին անգամ լսել եմ հոկտեմբերի 27-ի դեպքի կապակցությամբ՝ ձերբակալվելու առիթով:

Կարեն Հունանյանի,Վռամ Գալստյանի, Էդուարդ Գրիգորյանի և Դերենիկ Բեջանյանի մասին իմացել եմ դեպքի կապակցությամբ՝որպես տեռորիստական ակտի մասնակիցների: Նրանց, ինչպես նաև մյուս մեղադրյալներին չեմ ճանաչում:

Այժմ դեպքի հանգամանքների մասին.

1999թ. հոկտեմբերի 27-ին, իմանալով ԱԺ-ում տեղի ունեցած տեռորիստական ակտի՝ ազգային ողբերգության մասին,անհապաղ ԱԺ-ում և երկրում տիրող իրավիճակի մասին լրացուցիչ ինֆորմացիա ստանալու ուղղությամբ համապատասխան գործողություններ կատարելուց և երկրի անվտանգության ապահովման ուղղությամբ անհրաժեշտ հանձնարարականներ տալուց հետո,մեկնել

եմ Աժ և տեղում կազմակերպել տեռորիստների հետ բանակցությունների, պատառների ազատման, հետագա արյունահեղությունների կանխման, տեռորիստների վնասազերծման (զինաթափման) ու հետագա քննության անհրաժեշտություններից ելնելով, նրանց կենդանի պահելու գործողությունները: Առաջադրված հարցերի կապակցությամբ կարող եմ տալ հետևյալ պարզաբանումները:

Հարց - ՀՀ Աժ-ում տեղի ունեցած դեպքի մասին որտեղ և ե՞րբ եք իմացել, ումի՞ց, և ինչպիսի՞ տեղեկություն են Ձեզ հաղորդել:

Պատասխան - Ես գտնվում էի նստավայրի կապույտ դահլիճում, ընդունել էի Հայաստանում Ֆրանսիայի նախկին դեսպանին: Աշխատակազմի ղեկավար Ալիկ Հարությունյանը, բացելով դուռը, ինձ դուրս հրավիրեց ու հայտնեց, որ Աժ-ում ինչ որ կրակոցներ են տեղի ունեցել, զանգահարում է մարդ չի գտնում: Ես ներողություն խնդրելով դեսպանից, ընդունելությունը ընդհատեցի և անմիջապես վերադարձա իմ աշխատասենյակ ու սկսեցի տալ հրահանգներ:

Հարց -

Այդ կապակցությամբ Ձեր կողմից Ա.Հարությունյանին հրահանգներ տրվե՞լ են, թե ոչ, եթե այո, ապա ինչպիսի՞:

Պատասխան - Հանձնարարել եմ ինձ կապել Կ.Դեմիրճյանի հետ, Լեռքին Գործերի և Ազգային Անվտանգության նախարարների տեղակալներին հանձնարարել եմ ուժեղացված հսկողության տակ վերցնել հատուկ կոչության օբյեկտները, պարզել ի վերջո ինչ է կատարվում Ազգային ժողովում և այլն:

Հարց -

Տեռորիստների ինքնության մասին առաջինը ե՞րբ և ումի՞ց եք տեղեկացել, այդ մասին Ա.Հարությունյանն է հայտնել, թե մեկ ուրիշը:

Պատասխան - Այդ մասին ինձ առաջինը ասել է Ա.Հարությունյանը, նա հայտնեց, որ իրեն զանգահարել է Հրանտ Մարգարյանը և հայտնել է, որ Նաիրին զանգահարելով իրեն, ասել է իր կատարածի մասին, որ եկեք ու տեր կանգնեք: Ալիկը նաև ասաց, որ Հրանտը հայտնել է նաև, որ նա զանգահարել է ԿԳԲ(ԱԱ):

Հարց -

Նախագահի նստավայրում գտնված ժամանակ Ա.Հարությունյանը հայտնե՞լ է պատգամավոր Մարտուն Մաթևոսյանի միջոցով Ն.Հունանյանի հետ ունեցած հեռախոսային խոսակցության մասին, թե ոչ, եթե այո, ապա ի՞նչ է հայտնել:

Պատասխան - Այո, Ա.Հարությունյանը նաև ինձ զեկուցել է, որ պատգամավոր Մարտուն Մաթևոսյանի նախածեռնությամբ ինքը կապվել է նրա հետ, Մաթևոսյանը հեռախոսը փոխանցել է Նաիրին, որն էլ Ալիկին հայտնել է, որ Վազգեն Սարգսյանին խփել է եւ պահանջել է, որ Նախագահը գա Ազգային ժողով: Դա կլիներ ժամը 18-ի կողմերը:

Հարց -

Մինչև Աժ շենք մեկնելը Ա.Հարությունյանը ինչ պի՞սի վարքագիծ է դրսևորել և որտե՞ղ է գտնվել

Պատասխան - Գտնվել է նստավայրում, գտնվում էր հուզված (ՉՉՁՏսսՎՏՁՈվվօռ) վիճակում, ինչպես

բոլորը, որն է կասկածելի հանգամանք նրա վարքագծում, ինչպես այդ ժամանակ, այնպես էլ հետագայում չեմ նկատել:

Հարց -

Ե՞րբ և ու՞մ կողմից է որոշվել Ա.Հարությունյանի Աժ շենք գնալը, մասնավորապես դա Ա.Հարությունյանի ցանկությունն ու նախածեռնությունն է եղել, թե՛ հրահանգ, Աժ շենք մեկնելուց որքա՞ն ժամանակ առաջ է նա իմացել, որ պետք է մեկ Նի:

Պատասխան - Ելնելով ստեղծված իրավիճակից՝ ես որոշեցի մեկնել Աժ: Ալիկին ասացի, որ գնում եմ Ազգային ժողով: Ա.Հարությունյանը, իմանալով իմ որոշման մասին, անհանգստանալով իմ անվտանգության համար, 3 անգամ փորձեց համոզել, որ ես չդիմեմ այդ քայլին՝ ասելով, որ վտանգավոր է: Վերջին անգամ ես նույնիսկ նրան հանդիմանելով կոպիտ ասացի՝ ինչպես կարող եմ չգնալ, պատգամավորները, կառավարությունը գտնվում են այնտեղ, այնքան նա խնդրեց կես ժամ ժամանակ և քանի որ ես արդեն որոշել էի գնալ Աժ, բնական է, նա չէր կարող ինձ հետ չգալ: Հետևաբար իմացել է մեր մեկնելուց 30 րոպե առաջ: Այդ կես ժամում որոշվեց երթուղին, իրավիճակը և աշխատասենյակը, որտեղ պետք է գտնվեմ ես Աժ-ում, ու մենք շարժվեցինք:

Հարց -

Ե՞րբ, ժամը քանիսի՞ն եք մեկնել Աժ և ինչու՞ է Ա.Հարությունյանը մեկնել Ձեր մեքենայով:

գ.թ.51
Պատասխան - Աժ ենք մեկնել ժամը 19-ի կողմերը, ես ասացի՝ «գնացի՛ք» ու ես եմ նրան ասել, որ գա իմ ավտոմեքենայով, այլապես առանց իմ թույլտվության նա չէր կարող նստել իմ ավտոմեքենան:

Հարց - Ճանապարհին ավտոմեքենայի մեջ գտնվելու ժամանակ Ա.Հարությունյանը ի՞նչ է խոսել, մասնավորապես հեռախոսով խոսե՞լ է Ն.Հունանյանի հետ, թե ոչ, եթե այո, ապա նրանից ո՞վ է հեռախոսային կապը հաստատել և քա՞նի անգամ:

Պատասխան - Ճանապարհին մեր մեջ առանձնակի խոսակցություն տեղի չի ունեցել, մենք Աժ ենք հասել հաշվված րոպեների ընթացքում, ինչել է մեկ հեռախոսազանգ բջջայինով, կարծեմ զանգահարողը նախարարներից կամ պատգամավորներից մեկն էր: Խոսակցությունը տևել է մի քանի վայրկյան, գրեթե առանց բովանդակության:

Հարց - Ն.Հունանյանի հետ հեռախոսային խոսակցությունների ժամանակ Ա.Հարությունյանը հրահանգավորվե՞լ է, թե ոչ:

Պատասխան - Հրահանգավորումը այն էր, որ նա պետք է աշխատեր ամեն կերպ ձգձգել, ժամանակ շահել՝ պատճառաբանությամբ, որ Նախագահը չկա, տեղում չէ և այլն: Նման հրահանգավորում տրվել է նաև արդեն իսկ տեռորիստների հետ շփման եզրեր գտած և կապ հաստատած Գ.Գրիգորյանին:

Հարց - Ե՞րբ եք տեղեկացել, որ Ն.Հունանյանը պահանջում է Ա.Հարությունյանին, ո՞վ է այդ մասին հայտնել և ի՞նչ է որոշվել:

Պատասխան - Այդ մասին ինձ ասել է Գ.Գրիգորյանը,տեռորիստների կողմից այդ պահանջը ներկայացվել է այն ժամանակ,երբ նրանց հայտնվել է, որ ես այնուհանդերձ դաիլիճ չեմ գնալու: Ընդ որում, Ա.Յարությունյանին՝ որպես Նախագահի ներկայացուցչի, գալու միտքը, տարբերակը նրանց առաջարկվել է Գ.Գրիգորյանի, կարծեմ նաև պատգամավորներից ինչ-որ մեկի կողմից:

Յարց - Աժ շենք հասնելուց հետո Ա.Յարությունյանը հայտնե՞լ է,որ Ն.Յունանյանը մի քանի անգամ զանգահարել է իր քարտուղարուհուն և սպանացել, որ եթե ինքը(Ա. Յարությունյանը) անհապաղ չզանգի չկապնվի իր հետ, ապա զոհեր կլինեն:

Պատասխան - Այո,ասել է : Մինչ այդ ես Ա.Յարությունյանին ասացի,որ տակտիկական առումներով Ն.Յունանյանի հեռախոսազանգերին չպատասխանի, դարձյալ ժամանակ շահելու նպատակով: Այդ ընթացքում էլ Ն.Յունանյանը զանգահարել է Ա.Յարությունյանի գործավարուհուն: Գ.թ.52

Յարց - Աժ շենքում գտնվելու ժամանակ Ա.Յարությունյանը պատրաստակամությամբ հայտնե՞լ է Ն.Յունանյանի հետ բանակցություններ վարելու նպատակով,թե՞ ոչ:

Պատասխան - Ոչ չի դրսևորել, ուղղակի ասել է,եթե պետք է,անհրաժեշտ է, կարող եմ գնալ հանդիպման:

Յարց - Ի՞նչ հանգամանքներից ելնելով և ինչու՞է որոշվել,որ հատկապես Ա.Յարությունյանը հանդիպի Ն.Յունանյանի հետ:

Պատասխան - Այդ հարցին ես արդեն վերևում պարզաբանում տվեցի,նա հանդես է եկել որպես Նախագահի ներկայացուցիչ:(USջպ տՏվ՝ՅվՏ,ՈրսպՊրՅՉՈպ Չոպ ջՈՊՈպՅ \$ՏՏՏ?)

Յարց - Մինչև Ա.Յարությունյանը թեկնացության առաջադրումը այլ անձի,կամ անձանց թեկնացություն քննարկվե՞լ է, թե՞ ոչ, եթե՞ այդ, ապա՞ ումը:

Պատասխան - Մենք շարունակ մարդիկ էինք փնտրում,որոնք կարող էին այս կամ այն ձևով ներագրել տեռորիստների, մասնավորապես նրանց ղեկավար Ն.Յունանյանի վրա: Այդ նպատակով Աժ բերվեց նրա հայրը, կարծեմ ուսանողական ընկերներից մեկը: Յետո որոշվեց, որ նրա հետ բանակցությունների կզևա Յրանտ Մարգարյանը, որի հետ Նաիրի Յունանյանը մինչ այդ արդեն իսկ ունեցել էր հեռախոսային խոսակցություն: Վերջինս՝Յ.Մարգարյանը պատրաստակամություն հայտնեց հանդիպել Ն.Յունանյանի հետ, սակայն նրա կուսակցական ընկերները,առանձին խորհրդակցելով,արգելեցին նրան՝ պատճառաբանությամբ,որ Յ.Մարգարյանը ժամանակին դեր է խաղացել նրա ՅՅԴ-ից հեռացման գործում և այդ կապակցությամբ Ն.Յունանյանը նրա նկատմամբ ունենալով թշնամանք, ոխ, կարող է վնաս տալ նրան:

Ընդհանրապես մենք հետաքրքրվում էինք այն անձանցով,որոնք հետ Ն.Յունանյանը կապվել կամ կապվում էր դաիլիճից:

Յարց-Ի՞նչ պատճառով է այդքան ուշացումով տեղի ունեցել Ա.Յարությունյանի և Ն.Յունանյանի հանդիպումը:

Պատասխան - Ինչ ուշացման մասին է խոսքը:Հանդիպումը կայացավ այն ժամանակ, երբ Ա.Յարությունյանի անվտանգության երաշխիքները ավելի համոզիչ էին: Սկզբում ես չէի թողնում,հետո համաձայնվեցի՞երբ Գ.Գրիգորյանը սկսեց համոզել, որ երշխավորում է անվտանգությունը, որ ոչինչ չի լինի և որ տեռորիստների մոտ արդեն կա տրամադրվածություն հնարավոր հանձնվելու վերաբերյալ: Այնուհետև Գ.Գրիգորյանի և Ն.Յունանյանի միջև քննարկումներ գնաց հանդիպման տեղի վերաբերյալ, նախ որոշվեց նախագահության հետևի սենյակում,հետո այդ տարբերակով համաձայնություն ձեռք չբերվեց: Ի վերջո որոշվեց,որ հանդիպումը տեղի ունենա դաիլիճին կից սրահում:

Գ.թ.53

Յարց - Ա.Յարությունյանը հանդիպումից առաջ հրահանգավորվել է,թե ինչ վարքագիծ պետք է դրսևորի և ինչ պետք է խոսի Ն.Յունանյանի հետ:

Պատասխան - Հրահանգավորումը եղել է այն առումով, որ փորձի համոզել նրանց,ավելորդ լարվածություն չստեղծի, հիմնականը պետք է լիներ լտղի դերում և իմասար, թե ինչ են նրանք պահանջում,ինչ են ուզում, և ոչ թե խոստումներ տար:

Յարց - Նախքան այդ հանդիպումը համապատասխան ծառայությունները արդյոք չ՞են հրահանգավորվել հանդիպման ընթացքում գախտնալսում իրականացնել: Ու՞մ է հանձնարարված եղել տեռորիստների և պատանդների ազատման օպերատիվ աշխատանքների կազմակերպումը:

Պատասխան - Գործունեության ընդհանուր ղեկավարումը հանձնարարված է եղել ՆԳ փոխնախարար Յովիկ Յունանյանին, սակայն առանձին հանձնարարություններ են տրվել և այդ գործընդացին մասնակցել են նաև ԱԱՆ փոխնախարար Գոռ Յակոբյանը, քրեական հետախուզության վարչության պետ Յրաչիկ Յարությունյան, ռազմական ոստիկանության պետ Վովա Գասպարյանը: Ես կտրականապես խնդիր էի դրել առաջին հերթին կանխել հետագա հնարավոր ու անխուսափելի արյունահեղությունները, իսկ ապա ամեն կերպ զերծ մնալ տեռորիստների կյանքի նկատմամբ ոտնձգությունից հետագա քննության, օբյեկտիվ իրականության բացահայտման նկատառումներով: Ինչ վերաբերվում է գաղտնալսումներին, ապա ես նման հրահանգ չեմ տվել, ես իմ ներկայացուցիչին ուղարկել էի բանակցությունների և նա ընդամենը պիտի լսեր ահաբեկչի պահանջները և փոխանցեր ինձ:

Յարց - Նախքան Ա.Յարությունյանի հետ հանդիպելը ի՞նչ պայմաններ է ներկայացրել Ն.Յունանյանը և ու՞մ միջոցով է դրանք փոխանցել:

Պատասխան - Երբ ես եկա Աժ ու սկսեցի տիրապետել իրավիճակին:Գ.Գրիգորյանը ու դաիլիճից դուրս եկած որոշ բանագնաց պատգամավորներ հայտնեցին, որ Ն.Յունանյանը պահանջում է, որ ես գնամ դաիլիճ: Իսկ ինչ վերաբերվում է եթերի տրամադրմանը, ապա

պահանջ ներկայացվել է ավելի ուշ՝ Գ.Գրիգորյանի կողմից:

Չարք - Աժ շենքում գտնվելու ընթացքում Ա.Չարությունյանը հայտնե՞լ է արդյոք, որ Ն.Յունանյանի հետ ունեցած հեռախոսային խոսակցության ժամանակ վերջինս առանձին հանդիպում է պահանջել՝ նշելով, որ ուրիշ ոչ մեկը ներկա չգտնվի դրան: Եթե հայտնել է, ապա ինչպե՞ս է դա պատճառաբանել Ա.Չարությունյանը:

Պատասխան - Նման խոսակցություն ինձ հետ չի եղել: Գ.թ.54

Չարք - Ն. Յունանյանի հետ տեղի ունեցած հանդիպումից հետո ի՞նչ է հայտնել Ա. Չարությունյանը:

Պատասխան - Ա. Չարությունյանը հայտնեց, որ Ն.Յունանյանը հիմնականում մտահոգություն է հայտնել իրենց անվտանգության համար, որպեսզի իրենց հետ հաշվեհարդար տեղի չունենա, կատարվի արդար քննություն և այն սկսվի հենց այդ պահից, մինչև իրենց հանձնվելը՝ պատճառաբանությամբ, որ իբր դահլիճում եղել է փոխհրաձգություն, արժարժվել էր իրենց Թուրքիա մեկնելու հնարավորություն ընձեռելու և Նույնիսկ եկեղեցում պատսպարվելու հանգամանքը, որպեսզի իրենք տեղափոխվեն ԱԱ մեկուսարան, որի մասին նրանք արդեն խոսակցություններ էին տարել Գ. Գրիգորյանի հետ և այլև, և որպեսզի այն ամենը անձամբ իրենց երաշխավորեմ ես, ու դա հեռարձակվի եթերով:

Չարք - Ինչպե՞ս է ընթացել Ձեր և Ն.Յունանյանի հանդիպումը, ինչո՞վ է բացատրվում Ա. Չարությունյանի ներկայությունը այդ հանդիպմանը և ի՞նչ դեր է վերջինս ունեցել:

Պատասխան - Քանի որ Ն.Յունանյանը պահանջել էր, որ իրենց այդ վերը նշված պահանջների կատարումը երաշխավորեմ անձամբ, ես ելնելով ստեղծված իրավիճակից, որոշեցի հանդիպել նրա հետ՝ նախապես մերժելով նրան ուղիղ եթեր տրամադրելու պահանջը՝ ձեռնպահ մնալու համար սադրիչ հայտարարություններից: Դեռ այդ ժամանակ արդեն իսկ շրջանառության մեջ էր դրվել հայտարարությամբ հանդես գալու, հրապարակում տալու տարբերակը և կարծեմ արդեն իսկ կար նրանց կողմից կազմված հայտարարության տեքստի նախագիծ, որը դեռևս պետք է քննարկվեր և բերվեր վերջնական տեքստի: Յենց այդ տեքստի խմբագրման, կազմման և շարադրման համար էլ որոշվեց Ա. Չարությունյանի մասնակցությունը իմ և Ն. Յունանյանի հանդիպմանը:

Չարք - Ա.Չարությունյանի և Ն.Յունանյանի հարաբերությունների մասին ի՞նչ տեղեկություններ եք ունեցել և այդ կապակցությամբ ի՞նչ է հայտնել Ա. Չարությունյանը:

Պատասխան - Չայտնել է, որ ճանաչել եմ միմյանց դեռևս ուսանողական տարիներից, սակայն դեռ այդ ժամանակվանից նրանց հարաբերությունները եղել են վատ, անբարյացակամ, հետագայում նաև հայտնել է, որ Ն.Յունանյանը դիմել է իրեն աշխատանքի տեղավորման հարցով, սակայն ինքը չի ընդամառել:

Չարք - Ի՞նչ բնույթի և բովանդակության խոսակցություն է կայացել Ձեր և Ն.Յունանյանի միջև, որտե՞ղ:

Պատասխան - Մենք հանդիպեցինք առանձին սենյակում, այդտեղ սկզբից մտա ես, նոր 5 - 10 րոպե անց բերեցին Ն.Յունանյանին: Մեր խոսակցությունը տևել է շուրջ 20 րոպե: Առաջինը այն էր, որ նա փորձեց հիշեցնել 88 թ.-ին տեղի Գ.թ.55

ունեցած մեր հնարավոր հանդիպման նասին, որի վերաբերյալ ես նշեցի ցուցմունքի սկզբում: Այնուհետև իմ հարցին, թե արդյոք ուներ որևէ անձնական թշնամանք Վ.Սարգսյանի նկատմամբ, տվեց բացասական պատասխան ու սկսեց դժգոհել երկրում ստեղծված վիճակից, Վ.Սարգսյանի դերակատարությունից, որ իբր նա խանգարում էր երկրի զարգացմանը, մեղավոր է ստեղծված վիճակի համար և այլև, որ երկրում ցնցում էր անհրաժեշտ ու այդ քայլին ինքը դիմել է հանուն ժողովրդի, պատմությունը, սերունդները կգնահատեն իրեն, որ իրենց վրա նա եղել են կրակոցներ: Վ. Սարգսյանից բացի մյուս գոհերը պատահական կրակովների արդյունք են: Որից հետո ներկայացրեց իր պահանջները՝ իրենց անվտանգության ապահովման վերաբերյալ, որպեսզի իրենց նկատմամբ բռնություն չգործադրվի, լիսի արդար քննություն, բաց դատավարություն, իրենց տրամադրվեն պաշտպաններ, որպեսզի իրենց առանց զինաթափման տեղափոխվեն ԱԱ մեկուսարան: Ի վերջո հնարավորություն ընձեռնվի իրեն հանդես գալ եթերով և ժողովրդին բացատրել, թե ինչու է դիմել այդ քայլին: Ես նրան բացատրեցի, որ իրենց նկատմամբ բռնություն չի գործադրվի, ընթացքում նա հարցրեց, թե իրոք մեր հանրապետությունում մահապատիժ չի կիրառվում:

Ինչպես հասկացա, նա արդեն այդ առթիվ կոնսուլտացիաներ էր արել դահլիճում պատգամավորների ու, կարծեմ, նաև Գ.Գրիգորյանի հետ: Ես նրան բացատրեցի, որ, քանզի մենք ուզում ենք մտնել Եվրոխորհուրդ, այն մեր հանրապետությունում չի կիրառվում: Պահանջ դրեցի, որ զենքերը անպայմանորեն պետք է տեղում հանձնվի, այդ առթիվ որոշ դիսկուսիայից հետո ասացի, որ կարող են մոտները պահել մեկ ատրճանակ, մինչ մեկուսարան հասնելը և ճանապարհին նրանց նկատմամբ հաշվեհարդարից զերծ մնալու համար կտարվեն զրահամեքենայով: Ուղիղ եթերով հանդես գալու պահանջը կտրականապես մերժեցի և կանգնեցինք երկկողմանի նախապես գրված տեքստով հաղորդավարի միջոցով հայտարարությամբ հանդես գալու տարբերակի վրա: Իր տեքստում նա մի ամբողջ պարբերություն գրել էր Վ.Սարգսյանի վերաբերյալ, որը ես պահանջեցի հանել, նա որոշ տարակուսանքից հետո համաձայնվեց: Ա.Չարությունյանը խմբագրեց տեքստերը, դրանք ընթերցվեցին ու դրանով մեր բանակցությունները ավարտվեց, որից հետո նրան տարան դահլիճ, որին հետևեց զենքերի հանձնման պրոցեսը:

Ցուցմունքներս ընթերցեցի, շարադրված և տպագրված է իմ պատմածով, ճիշտ է:

Վկա՝ /ստորագ/ Ռ.Քոչարյան

Քննիչ՝ /ստորագ/ Մ.Մաթեվոսյան

Հայաստան

«Խայտառակ փորձեցին անել իմ երկիրը». Վահան Ջովհաննիսյանը՝ ԵԽԽՎ-ում կատարվածի մասին



ՏԻԳՐԱՆՈՒԶԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, Հոկտեմբեր 3 2013 Տպել | Դիտվել է՝ 2126 43 ԱԺ «Ժառանգություն» խմբակցության պատգամավոր Զարուհի Փոստանջյանին ԵԽԽՎ-ում հայկական պատվիրակության կազմից հեռացնելու մտադրության մասին ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանի հայտարարությանն անդրադառնալով՝ ԱԺ ՀՅԴ-ական պատգամավոր Վահան Ջովհաննիսյանն ասաց, թե ԱԺ կանոնակարգը հնարավորություն և իրավունքն է տալիս ԱԺ նախագահին ձևավորելու պատվիրակությունները: Նա նշեց, որ Զ. Փոստանջյանի պարագայում Հ. Աբրահամյանը, հավանաբար, նկատի ուներ, որ «Ժառանգություն» խմբակցության կողմից ներկայացված թեկնածուն պետք է վերանայվի: 168.am-ը Վահան Ջովհաննիսյանից հետաքրքրվեց, թե համամիտ չէ՞ կարծիքներին, որ Զ. փոստանջյանի նկատմամբ իշխանության վերաբերմունքը խիստ է, որովհետև վերջինս ունի ազատ արտահայտվելու իրավունք: Ի պատասխան Վահան Ջովհաննիսյանն ասաց.«Նախ և առաջ, ես համաձայն եմ այն մտքի հետ, որ ազատությունը, ձեր ազատությունը ձեռքերը թափահարելու, ավարտվում է իմ քթի մոտ: Երբ դուք վիրավորանք եք հասցնում, անհատական վիրավորանք եք հասցնում, սա այլևս խոսքի ազատություն չէ՝ բոլորովին այլ կերպ է բնութագրվում: Բանավեճի մեջ կարող է երբեմն նման սահմանները չհարգվեն, բայց հարցը սա չէ: Ես չեմ կարողանում հասկանալ, ինչպե՞ս ընդդիմադիր պայքարին, օրինակ իշխանափոխությանը միտված պայքարին, կարող է նպաստել քո սեփական երկրի նվաստացումը ուրիշ երկրներում: Ես շատ հաճախ եմ հանդիպում, հավանաբար, դուք էլ, որ այս կամ այն բարձրաստիճան պաշտոնյան, այս կամ այն երկրում մեղադրվում է տարբեր հոդվածներով, այդ թվում՝ քրեական, լինի դա նախագահ, քաղաքապետ թե այլ մեկը: Նման դեպքեր լինում են Բրիտանիայում, Գերմանիայում, Իտալիայում և այլն: Բայց ես երբեք չեմ տեսել Բրիտանիայում, Գերմանիայում... անգամ այն դեպքում,

որ երբ ինֆորմացիան նույնիսկ կասկածելի է կամ ասեկոսեի բնույթ է կրում, ենթադրում է, ինչպես օրինակ այս դեպքում էր, նման հարց տան: Ես չեմ տեսել, որևէ իտալացի պատգամավոր, ասենք պարոն Բեռլուսկոնիին, որի վարքը ամբողջ աշխարհին է հայտնի, նման հարցով դիմի միջազգային ատյանում: Սա արդեն բոլորովին ուրիշ սահման անցնել է, որը ինձ համար ընդունելի չէ»: Վահան Ջովհաննիսյանը չցանկացավ ենթադրել, թե ինչու է Զարուհի Փոստանջյանը նման հարց ուղղել ՀՀ նախագահին, բայց ասաց. «Մեր երկրին լուրջ հարված հասցվեց, խայտառակ փորձեցին անել իմ երկիրը, որը անկախ նրանից, թե ով է իշխանության՝ իմ երկիրն է: Մարդիկ չեն կարողանում տարբերակել իշխանություն ու պետություն հասկացությունները: Իշխանությանը վնաս հասցնելու համար ոտնատակ են տալիս նաև պետականությունը»:

168 ժամ անցանց լրատվական կայք

Հայաստանի միջազգային պահուստները օգոստոսին աճել են

Հոկտեմբեր 02, 2013



Հայաստանի միջազգային պահուստները 2013 թ. օգոստոսին կազմել են մոտ 1.79 մլրդ դոլար: Այդ մասին նշված է ՀՀ Կենտրոնական բանկի հրապարակման մեջ (.Միջազգային պահուստների եւ արտարժույթային իրացվելիության ստանդարտ աղյուսակե): Նախորդ ամսվա նկատմամբ միջազգային պահուստներն աճել են մոտ 40 մլն դոլարով: Աճը հավանաբար պայմանավորված է արտարժույթի շուկայում դոլարի գնումներով: Պահուստների կառուցվածքում օգոստոսին աճել են արժեթղթերի ծավալները, նվազել կանխիկ դրամական միջոցները: Արժեթղթերի ծավալը միջազգային պահուստներում կազմել է 1.31 մլրդ դոլար՝ նախորդ ամսվա համեմատ ավելանալով մոտ 90 մլն դոլարով: Կանխիկ արտարժույթի ծավալը 413 մլն դոլար է՝ նախորդ ամսվա նկատմամբ նվազելով մոտ 40 մլն դոլարով: Օգոստոսին նախորդ ամսվա համեմատ միջազգային պահուստներում նվազել է Արժույթի միջազգային հիմնադրամում Հատուկ փոխառության իրավունքները՝ կազմելով 65,6 մլն դոլար՝ նախորդ ամսվա 74,4 մլն դոլարի համեմատ:

Մեղրի քաղաքի մոտ ոսկու եւ բազմամետաղների նոր հանքավայր են հայտնաբերել

Հոկտեմբեր 02, 2013

Հայ-ռուսական «Ատ-Մետալս» համատեղ ընկերությունը մտադիր է շահագործել Մեղրի քաղաքից 35 կմ հյուսիս գտնվող ոսկու եւ բազմամետաղների հանքավայրը: ՀՀ բնապահպանության նախարարությունը իր պաշտոնական կայքէջում հրապարակել է Տաշտունի լեռնահարստացուցիչ համալիրի աշխատանքային նախագիծը:



Փորձարարական գործարանը կառուցվելու է Տաշտուն համայնքում: Բուն հանքավայրը գտնվում է Տաշտուն եւ Լիճք գյուղերի մոտ: Ի դեպ՝ հենց այս շրջանում է միջադեպ գրանցվել ռուս սահմանապահների ու ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր Զարուհի Փոստանջյանի միջև: Ըստ երեւոյթին՝ ռուս սահմանապահները ինչ-որ բիզնես հետաքրքրություն ունեն այս նախագծում:

Պաշտոնապես՝ «Ատ-Մետալս» ՍՊԸ-ի հիմնադիրներն են հայկական կողմից՝ Դավիթ Գրիգորյանը, ռուսական կողմից՝ «Վենտուրայն» ու «ԱՏ-Սպեցտեխնոլոգիա» ընկերություններն ու «Ավիատեխնոլոգիա» գիտական միավորումը:

«Ըստ մեր աղբյուրների՝ ՀՅԴ-ն եւ Վահան Հովհաննիսյանը չեն շտապում այս հարցում, հակառակը՝ ուզում են, որ նշանակումը հնարավորինս ուշ լինի, որ հանրային «աղմուկը փոքր-ինչ դադարի»: Ոմանք Հովհաննիսյանի թափուր մանդատի առնչությամբ ՀՅԴ-ին խորհուրդ են տվել ուշադրություն դարձնել գենդերային քաղաքականությանը եւ պաշտամենտ բերել գեղեցիկ սեռին, ի դեմս Ռուզան Առաքելյանի եւ կամ Լիլիթ Գալստյանի: Սակայն դա պրակտիկորեն անհնարին է, քանի որ նրանցից առաջ մեծ թվով մարդիկ կան, եւ վերջիններիս հրաժարեցնելն այդքան էլ հեշտ չէ, ուստի ընկեր Վահանի մանդատը կանցնի ոչ թե ՀՅԴ հայտնի տիկնանցից որեւէ մեկին, այլ «Ավշարի» Գրիգորյան եղբայրներից Արամայիսին, որն էլ թվով երկրորդ բիզնես-պրոյեկտը կլինի ՀՅԴ խմբակցությունում՝ «Գրանդ քենդիի» ներկայացուցչից հետո:

Հիշեցնենք, որ Արամայիս Գրիգորյանը ՀՅԴ քվոտայով գյուղնախարար է եղել, նրա Արայիկ եղբայրն արդեն իսկ պատգամավոր է՝ անկախ ստատուսով, սակայն ջերմորեն հարում է ՀՀԿ-ին: Գրիգորյաններն անչափ մեծ ծառայություններ են մատուցել ընտրությունների ժամանակ Սերժ Սարգսյանին եւ համարվում են Արարատի մարզում «ասողներ», - գրում է թերթը:

67 տարեկան հասկում մահացել է Գրողների միության նախագահ Լ. Անանյանը

03/09/2013 10:32:00 news.am



67 տարեկան հասկում մահացել է Գրողների միության նախագահ Լեւոն Անանյանը: Նա տառապում էր քաղցկեղ հիվանդությամբ:

Այս տեղեկությունը թղթակցին հաստատեցին «Նաիրի» բժշկական կենտրոնից:

Լեւոն Զաքարի Անանյանը ծնվել է 1946 թ. հոկտեմբերի 13-ին Տավուշի մարզի Կողբ գյուղում: 1964 թ. ավարտել է Կողբի միջնակարգ դպրոցը, 1968 թ. ավարտել է Երեւանի պետական համալսարանի քիմիական ֆակուլտետը: Աշխատել է մի շարք պարբերականներում եւ միաժամանակ խմբագրել «Մանկավարժ» թերթը: 1975 թ. աշխատանքի է անցել «Գարուն» գրական ամսագրի

«Հրապարակ».

Դաշնակցությունում լուրջ կռիվ է Վահան Հովհաննիսյանի մանդատի համար



Սեպտեմբեր 27, 2013

«Հրապարակը» գրում է, թե Դաշնակցության «տանը» լուրջ կռիվ է Վահան Հովհաննիսյանի մանդատի համար: Հիշեցնենք, ընկեր Վահանն սպասում է իր ազդեմանին՝ Գերմանիայում դեսպան նշանակվելու համար:

խմբագրությունում, 1990-ին ընտրվել է «Գարուն» ամսագրի գլխավոր խմբագիր:

1992 թ. հիմնադրել է «Ապոլոն» հրատարակչությունը, որն առաջին անգամ բնագրից թարգմանությամբ հայ ընթերցողներին ներկայացրեց համաշխարհային գրականության մի շարք ստեղծագործություններ: 2001 թ. ընտրվել է Հայաստանի գրողների միության նախագահ, եւ մինչ օրս նախագահում է այն:

Նա դասախոսում էր Երեւանի պետական համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետում: «Նոյեմբերյան» հասարակական կազմակերպության ղեկավարն է 2002 թվականից: Գրել, կազմել եւ խմբագրել է բազմաթիվ գրքեր, հարյուրավոր հրապարակախոսական հոդվածներ, առաջաբաններ:

2008 թ. մայիսի 26-ին նրան շնորհվել է Հայաստանի Հանրապետության մշակույթի վաստակավոր գործիչ պատվավոր կոչումը:

Լ.Է.ուն Անանյանն ամուսնացած է, ունի երեք երեխա:

Լ.Է.ուն Անանյանի ստեղծագործությունները թարգմանվել են ռուսերեն, անգլերեն, վրացերեն եւ այլ լեզուներով: Միջազգային երեք ակադեմիաների անդամ է:

ԼՌԻՅՍ-ը ցավակցում է Լ.Է.ուն Անանյանի ընտանիքին, հարազատներին, ընկերներին՝ ցավալի կորստի համար:

Մահացել է ԶԶ ժողովրդական արտիստ Սոս Սարգսյանը

26 Սեպտեմբերի 2013 - 22:35



Կյանքի 84-րդ տարում մահացել է հայ անվանի դերասան, ժողովրդական արտիստ Սոս Սարգսյանը:

Ծնվել է 1929 թվականի հոկտեմբերի 24-ին Ստեփանավան քաղաքում: 1948 թ. տեղափոխվել է Երևան և աշխատել Երևանի պատանի հանդիսատեսի թատրոնում՝ որպես դերասան: 1954 թ. ավարտել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտի դերասանական ֆակուլտետը: 1954-1991թթ. եղել է Երևանի Գաբրիել Սունդուկյանի անվան ակադեմիական թատրոնի դերասան: 1991 թ. հիմնադրել է Համազգային թատրոնը: 1997-2006 թթ. Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի ռեկտորն է, 2006-ից՝ ինստիտուտի կառավարման խորհրդի նախագահը: 2009 թ. ընտրվել է ՀՀ Հանրային խորհրդի անդամ:

Նկարահանվել է քառասունից ավելի գեղարվեստական ֆիլմերում, ինչպիսիք են՝ «Նվագախմբի տղաները», «Եռանկյունի», «Մենք ենք, մեր սարերը», «Նահապետ», «Խաթաբալա», «Ձորի Միրո», «Սոյարիս», Հայաստանում և ԽՍՀՄ մյուս տարածքում նկարահանված բազմաթիվ այլ ֆիլմերում: Ռուսաստանցի բեմադրիչների նկարահանված ֆիլմերում առավել հայտնի են իր խաղացած Գիբարյանի (Տարկովսկու «Սոյարիս»), թափառիկ արտիստի (Վ.Բորտկոյի «Առանց ընտանիքի»), Ֆեոֆան Պրոկոպովիչի (Ս.Պուշկինի «Միխայլո Լուոնոսով») դերերը:

ԼՌԻՅՍ-ը ցավակցում է սիրված դերասանի ընտանիքին, հարազատներին, ընկերներին՝ ցավալի կորստի համար:

Հայ գիտնականն իր գրքում բացահայտել է Բրիտանական թանգարանում հայոց պատմության կեղծարարության փաստը



Սեպտեմբեր 04, 2013 | 12:14

Վերջերս Հայաստանում լույս է տեսել պատմաբան, Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիայի պատմության ինստիտուտի Հին դարերի պատմության բաժնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Էդուարդ Դանիելյանի «Հայաստանի քաղաքակրթական նշանակության բրիտանացի առաջադեմ գործիչների գնահատականն ընդդեմ «Հնագույն Թուրքիա» կեղծիքի ցուցադրությանը Բրիտանական թանգարանում» անգլալեզու գիրքը:

Այն լույս է տեսել ի պատասխան Բրիտանական թանգարանում «Հնագույն Թուրքիա» անվան տակ բացված թիվ 54 սրահի ցուցադրության:

Նման անվանմամբ սրահի անճշտության վերաբերյալ թանգարանի տնօրինությանը շարունակ նշել են մի շարք պատմաբաններ, այդ թվում նաև Եվրոպայի Հայկական Միությունների Ֆորումը: Հետագայում՝ ինչ-ինչ պատճառներով, սրահի անվանումը փոխվել է «Անատոլիա, Ուրարտու»-ի, որը նույնպես անհնար է համարել ճշգրիտ:

NEWS.am-ի հետ գրույցում գիտնականը նման անվանումով ցուցասրահի բացումը գնահատել է որպես Հայոց ցեղասպանության շարունակություն՝ մշակութային

տեսակետից, ինչպես նաև Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ժխտման շարունակություն:

«Բրիտանական թանգարանի տնօրինությունը մարդու իրավունքների միջազգային օրենքի տեսանկյունից խախտում է Հայկական լեռնաշխարհում հայ ժողովրդի մշակութային ժառանգության իրավունքները՝ թե՛ ցեղասպանության ենթարկված Արեւմտյան Հայաստանի, թե՛ անկախ Հայաստանի Հանրապետության տարածքում հայտնաբերված հնագիտական նյութերը «54 ցուցարահում» ներկայացնելով «Հնագույն Թուրքիա» կեղծ անվանումով, ինչը Թուրքիայի կողմից ցեղասպանության ժխտման քաղաքականության շարունակությունն է»,- նշել է Էդուարդ Դանիելյանը:

Իր գրքում պրոֆեսորն անդրադառնում է այն փաստին, որ ցուցարահի գտածոները պատկանում են Նեոլիթի, Էնեոլիթի, բրոնզի եւ երկաթի դարերի ժամանակաշրջաններին, երբ աշխարհի քարտեզի վրա անգամ «Թուրքիա» անվամբ պետություն գոյություն չի ունեցել:

Նա նշում է, որ համաշխարհային պատմության բազում փաստերի համաձայն, թուրքերի նախնիներ սելջուկների քոչվոր ցեղերն Արեւմտյան Ասիայում են հայտնվել միայն 11-րդ դարի երկրորդ կեսից, ուստի միանգամայն անհեթեթ է «Հին Թուրքիայի» գոյության փաստը:

Պատմաբանը նաև մատնանշում է ցուցարահի նմուշների հետ կապված կեղծիքների առկայությունը, օրինակ՝ օբսիդիանի մասին այն կեղծ տեղեկությունը, որ իբրև «Հին Թուրքիան» էր արտահանում այն հարեւան երկրներ:

«Կենտրոնական եւ արեւլյան լեռներ» աշխարհագրական բնութագրերից եւ ժամանակակից Հաջիլար (Բուրդուր նահանգում) անվանումից հետեւում է, որ խոսքը մի կողմից Փոքր Ասիայի կամ Անատոլիայի հնագիտական նյութերի, մյուս կողմից՝ Հայկական լեռնաշխարհի արեւմտյան հատվածի մասին է: Հակառակ օբսիդիանի մասին տեղեկության կապակցությամբ կիրառված այդպիսի կեղծ տերմինաբանության, համարյա կես դար առաջ բրիտանական եւ ամերիկյան հանգեւտները նշել են, որ օբսիդիանը նեոլիթյան դարաշրջանում Հին Հայաստանից արտահանվում էր Միջագետք եւ Մերձավոր Արեւելք», - գրում է պրոֆեսորը:

Նա անհասկանալի է համարում այն փաստը, որ Բրիտանական թանգարանի տնօրինությունը հարկ չի համարել ծանոթանալ Հայաստանի մասին եղած հին հունական, ասորական, հռոմեական եւ նույնիսկ հենց բրիտանական աղբյուրներում եղած տեղեկությունների հետ:

Այս փաստն ապացուցելու նպատակով պատմաբանը նաև բազում օրինակներ է բերում հենց բրիտանացի գիտնականների աշխատություններից, այդ թվում՝ Լոնդոնի համալսարանի պրոֆեսոր, հնեաբան Դեւիդ Մարշալ Լանգի «Հայաստանը քաղաքակրթության օրրան» գրքից, որտեղ բրիտանացի գիտնականը Հայաստանն անվանում է քաղաքակրթության օրրան եւ դասում է այն նույն շարքում, որում գտնվում են հնագույն Եգիպտոսը, Շումերն ու Բաբելոնը:

Բացի Լանգից, նա նշում է բրիտանացի մի շարք այլ գիտնականների եւ մտավորականների, այդ թվում՝ Ջորջ Բայրոնին, Արչիբալդ Սեյսին, Հենրի Լինչին, Ջեյմս Բրայսին, Առնոլդ Թոմսին, ովքեր չափազանց բարձր են գնահատել հայկական քաղաքակրթական արժեքները համաշխարհային մշակույթի գանձարանում:

Գրքում Էդուարդ Դանիելյանը ներկայացրել է նաև հին եւ միջին դարերի Հայաստանի քարտեզը, որի տարածքը ընդգրկում է Մեծ եւ Փոքր Հայքը, ինչպես նաև Կիլիկյան Հայաստանը:

Պրոֆեսորը նշում է նաև այն փաստը, որ Մեծ Բրիտանիան, որը 1915 թվականի մայիսի 24-ին Ռուսաստանի եւ Ֆրանսիայի


հետ համատեղ Թուրքիայի իրագործած Հայոց Ցեղասպանությունը դատապարտող առաջին պետություններից է, ոչ միայն զոհել է Հայոց Ցեղասպանության ճանաչման փաստն ի օգուտ անգլո-թուրքական քաղաքական շահերի, այլև մասնակցում է Թուրքիայի կողմից կատարած այդ պատմական կեղծարարությանը:

Ինչ վերաբերվում է սրահն «Անատոլիա, Ուրարտու» վերանվանելուն, պրոֆեսորը շեշտում է, որ «Անատոլիա» աշխարհագրական անվանումը վերաբերվում է միայն Փոքր Ասիային, եւ այդ տերմինի կիրառումը Հայկական լեռնաշխարհի կապակցությամբ բացարձակ կեղծիք է:

Նշելով պատմական բոլոր փաստարկները պատմաբանը պնդում է, որ սրահը պետք է կրի ոչ թե «Անատոլիա, Ուրարտու», այլ «Հին Հայաստան» եւ «Հին Փոքր Ասիա» անվանումները, ինչն ամբողջությամբ համապատասխանում է տվյալ ժամանակաշրջանի պատմա-աշխարհագրական իրականությանը:

Հայաստանի և Ռուսաստանի նախագահները ստորագրել են համատեղ հայտարարություններ

04/09/2013



Ռուսաստանի Դաշնության Նախագահ Վ. Վ. Պուտինի հրավերով Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Ա. Սարգսյանը 2013թ. սեպտեմբերի 3-ին աշխատանքային այց կատարեց Ռուսաստանի Դաշնություն:

Ս. Ա. Սարգսյանը և Վ. Վ. Պուտինը գոհունակությամբ նշեցին Հայաստանի և Ռուսաստանի փոխգործակցության դրական դինամիկական քաղաքական, առևտրատնտեսական, մշակութային-հումանիտար, ռազմական ու ռազմաքաղաքական ոլորտներում և հաստատեցին հավատարմությունը 1997թ. օգոստոսի 29-ին Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև կնքված Բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին պայմանագրում և 2006թ. սեպտեմբերի 26-ին ստորագրված՝ 21-րդ դարին միտված Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև դաշնակցային փոխգործակցության մասին հռչակագրում ամրագրված սկզբունքներին:

Բանակցությունների ընթացքում պետությունների ղեկավարները համակողմանիորեն քննարկեցին երկկողմ դաշնակցային գործընկերության ներկա

վիճակն ու հեռանկարները, արտաքին քաղաքական փոխգործակցության հարցերը:

Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության Նախագահները հաստատեցին իրենց հավատարմությունը Լեռնային Ղարաբաղի հակամարտության լուծմանը բացառապես խաղաղ միջոցներով՝ ԵԱՀԿ Մինսկի Խմբի համանախագահների հետ համատեղ աշխատանքի ձևաչափով, ուժի կամ ուժի սպառնալիքի չկիրառման, պետությունների տարածքային ամբողջականության, ժողովուրդների իրավահավասարություն և ինքնորոշման իրավունքի մեկ ամբողջության կազմող սկզբունքների հիման վրա: Տարածաշրջանային կայունության և անվտանգության ապահովման ուղղությամբ համատեղ աշխատանքի համատեքստում նշվեց կողմերի փոխադարձ պատրաստակամությունը ռազմաքաղաքական և ռազմատեխնիկական ոլորտներում համագործակցության հետագա ամրապնդման և փոխգործակցության կատարելագործման հարցում:

Երկու երկրների նախագահներն առանձին հայտարարությամբ հաստատեցին Հայաստանի և Ռուսաստանի վճռականությունը Եվրասիական տարածքում տնտեսական ինտեգրման գործընթացները զարգացնելու հարցում:

Արտահայտվեց երկու երկրների պատրաստակամությունը Հայաստանի տնտեսության արդիականացմանն ու դիվերսիֆիկացմանը և երկրի էներգետիկ անվտանգության ամրապնդմանն ուղղված երկկողմ ծրագրերի գործնական իրականացման հարցում:

Հայաստանի և Ռուսաստանի նախագահները նշեցին ներկայումս գործող Հայկական ԱԷԿ-ի շահագործման ժամկետի երկարաձգմանն ուղղված աշխատանքների, ինչպես նաև նոր ատոմային էլեկտրակայանի կառուցման նախագծի կարևորությունը:

Պայմանավորվածություն ձեռք բերվեց Ռուսաստանից Հայաստան էներգակիրների մատակարարման հարցում:

Հայաստանի և Ռուսաստանի ղեկավարներն ընդգծեցին ենթակառուցվածքային ծրագրերի, այդ թվում նաև երկաթուղային հաղորդակցության, ինչպես նաև նոր լոգիստիկ և հաղորդակցման ուղիների իրագործման ուղղությամբ համատեղ ջանքերը շարունակելու կարևորությունը:

Շեշտադրվեց Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև մինչև 2020 թվականը երկարաժամկետ տնտեսական համագործակցության ծրագրի լիարժեք հետևողական իրագործման կարևորությունը, որի կապակցությամբ երկու երկրների ճյուղային գերատեսչություններին տրվել են համապատասխան հանձնարարականներ:

Հայաստանի և Ռուսաստանի Նախագահների համատեղ հայտարարություն 2013 թվականի սեպտեմբերի 3-ին Մոսկվայում տեղի ունեցած բանակցությունների արդյունքում Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Ա. Սարգսյանը և

Ռուսաստանի Դաշնության Նախագահ Վ. Վ. Պուտինը հաստատեցին Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության նպատակադրումը Եվրասիական տարածքում տնտեսական ինտեգրման գործընթացների հետագա զարգացման ուղղությամբ:

Այդ համատեքստում Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Ա. Սարգսյանը հայտարարեց Մաքսային միությանը միանալու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության որոշման և այդ նպատակով անհրաժեշտ կատարելիք քայլերը ձեռնարկելու մասին, իսկ հետագայում՝ Եվրասիական տնտեսական միության ձևավորմանը մասնակցելու վերաբերյալ:

Ռուսաստանի Դաշնության Նախագահ Վ. Վ. Պուտինն իր աջակցությունը հայտնեց Հայաստանի Հանրապետության այդ որոշմանը և հայտնեց այդ գործընթացին համակողմանիորեն աջակցելու Ռուսական կողմի պատրաստակամությունը:

Արցախ

Սեպտեմբերին Ադրբեջանը ավելի քան 1000 անգամ խախտել է հրադադարի ռեժիմը



Հոկտեմբեր 02, 2013

Սեպտեմբերին Ադրբեջանը ավելի քան 1000 անգամ խախտել է Հայաստանի եւ ԼՂՀ հետ հրադադարի ռեժիմը: Այս մասին NEWS.am-ի թղթակցի հետ զրույցում հայտարարել է Հայաստանի պաշտպանության նախարարի մամուլի քարտուղար Արծրուն Հովհաննիսյանը:

ՊՆ տվյալներով՝ հայկական կողմը ստիպված է եղել ադրբեջանցիների կողմից հրադադարի խախտման պատճառով 210 անգամ պատասխան կրակ բացել: Ադրբեջանի ՋՈՒ կողմից հրադադարի ռեժիմի խախտումների տասը տոկոսի դեպքում գործել են դիպուկահարները: Այդ դեպքում կիրառվել է միջին տրամաչափի սպառազինությունը: Միեւնույն ժամանակ ադրբեջանական կողմը մոտ 35 անգամ կիրառել է խոշոր տրամաչափի դիպուկահար զենք: Հայկական կողմն այդպիսի զենք կիրառել է մոտ 15 անգամ:

Արեւմտյան Վայստամ

Աղթամարի Սուրբ Խաչի պատարագին աղոթելու ենք Մերձավոր Արեւելքում խաղաղության համար. Արք. Արամ Աթեշյան



Սեպտեմբեր 02, 2013

Պոլստ հայոց պատրիարքական ընդհանուր փոխանորդ, արք. Արամ Աթեշյանը հայտնել է, որ այս տարի սեպտեմբերի 8-ին տեղի ունենալիք Աղթամարի Սուրբ Խաչի պատարագին աղոթելու են Մերձավոր Արեւելքում խաղաղության համար:

Թուրքական Anadolու գործակալության հետ զրույցում Պոլստ հայոց պատրիարքական փոխանորդ, արք. Արամ Աթեշյանը նշել է, թե պատարագի նախապատրաստական աշխատանքները նորմալ ընդանում են՝ շեշտելով, թե առաջին պատարագի պես բազմամարդություն չեն սպասում, սակայն այս պատարագին առաջին անգամ կլինեն մկրտություններ:

Արք. Աթեշյանի խոսքով՝ պատարագին աղոթելու են Մերձավոր Արեւելքում եւ աշխարհում խաղաղության համար եւ հանդես են գալու կոչով:


Վանի մշակույթի եւ տուրիզմի վարչության պետն իր հերթին ավելացրել է, որ պատարագի նախապատրաստական աշխատանքներն առանց խոչընդոտների են ընթանում եւ իրենք մշտապես կապի մեջ են պատրիարքարանի հետ:

Նշենք, որ Վանի Աղթամար կղզու Սուրբ Խաչ եկեղեցում պատարագը տեղի է ունենալու սեպտեմբերի 8-ին:

Առաջին անգամ Վանի Աղթամարում եւ Դիարբեքի Սուրբ Կիրակոսում պատարագները կհաջորդեն միմյանց
Սեպտեմբեր 03, 2013

Վանի Աղթամար կղզու Սուրբ Խաչ եկեղեցում եւ Դիարբեքի Սուրբ Կիրակոս եկեղեցում իրականացվելիք պատարագներն այս տարի հաջորդելու են միմյանց՝ սեպտեմբերի 8-ին եւ սեպտեմբերի 10-ին:

Վանի Աղթամար կղզու Սուրբ Խաչ եկեղեցում պատարագն իրականացվելու է այնպես, ինչպես որ նախատեսված է՝ սեպտեմբերի առաջին կիրակի: Հաշվի առնելով այս հանգամանքը, որ մեծ թվով ուխտավորներ Վան են այցելելու, որոշվել է Դիարբեքի Սուրբ Կիրակոսում անցկացվող պատարագն իրականացնել Սուրբ Խաչի պատարագից 2 օր անց: Այս ձեռով հնարավորություն է տրվում Վանի Աղթամարի Սուրբ Խաչի պատարագին մասնակցած ուխտավորներին մեկնել Դիարբեքի եւ այնտեղ էլ մասնակցել պատարագի:



Նախորդ մի քանի տարիներին Աղթամարի Սուրբ Խաչում պատարագն իրականացվել է սեպտեմբերի առաջին կիրակին, իսկ Դիարբեքի Սուրբ Կիրակոսում հոկտեմբերին եւ նոյեմբերին:

Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցին 915-921 թվականներին կառուցվել է Վասպուրականի իշխան Գագիկ Արծրունու պատվերով՝ ճարտարապետ, քանդակագործ և նկարիչ Մանվելի կողմից: Տաճարի արտաքին պատերը զարդարված են 6 հորիզոնական շարք կազմող զարդաքանդակներով, որոնք չեն խախտում պատերի հարթությունը: Զարդաքանդակները ստեղծելիս Մանվելը հաշվի է առել հնարավոր դիտանկյունները և տարբեր ժամերի լուսավորությունը:

1400 աղոթատեղի ունեցող Դիարբեքի Սուրբ Կիրակոս եկեղեցին կառուցվել է 1376 թվականին, Հանչեփեք թաղամասում, որը տեղի մահմեդականները անվանել են «գյավուրների թաղամաս» քանի որ մեծ թվով քրիստոնյաներ են ապրել մինչև Հայոց ցեղասպանությունը:

քաղաքապետարանը: Արգելված թեմա. Դերսիմի հայերի միության նախագահի սկանդալային հայտարարությունները

Սեպտեմբեր 06, 2013 | 00:04

Թուրքիայում ծպտյալ հայերի թեման շարունակում է անհանգստացնել ոչ միայն ազգայնամոլական շրջանակներին, այլ նաև քուրդ լրագրողներից ոմանց: Վանի տեղական կայքերից մեկի լրագրող Օղուզհան

Օնեմն անդրադարձել է նրան, թե քրդերն ալեի չեն լինում, որի շրջանակում մեջբերել է հակահայկական բովանդակությամբ հայտնի Habervaktim կայքում հրապարակված տեղեկությանը ծպտյալ հայերի մասին: Քուրդ լրագրողը, նշելով, թե ինքը բազմիցս շեշտել է, թե քուրդ-ալեի չի լինում, որ քրդերը ամենասկզբից ի վեր եղել են սուննի, ընթերցողին է ներկայացրել ալեի վաղ Habervaktim-ում ծպտյալ հայերի հետ կապված հրապարակումից հատված:



«BDP-ի ծպտյալները (քրդական «Խաղաղություն եւ ժողովրդավարություն» կուսակցություն) Թուրքիայի ամենամեծ խնդիրներից են: Ծպտյալները... Իրենց ալեի ներկայացնող, իրենց քուրդ ներկայացնող ծպտյալ հայեր, իրենց թուրք ներկայացնող հրեաներ...: Ցույց տալով թե մուսուլման են, գաղտնի ծառայություն են մատուցում իրենց կրոններին, գաղտնի էթնիկ խմբերին:

Այժմ BDP-ի ներսում, PKK-ի ներսում մեծ թվով ծպտյալ հայեր կան: Այդպես են ասում: Նույնիսկ կան պնդողներ, թե PKK-ն լրիվ հայկական կառույց է: Այս համատեքստում կապվեցինք Միհրան Փրկիչի հետ, ով փոխել է իր կրոնը եւ ստեղծել Դերսիմի հայերի միությունը: Միհրան Փրկիչը, ով հայկական արմատներով մուսուլմաններին կոչ է անում վերադառնալ արմատներին, շատ հետաքրքիր հայտարարություններ արեց գրույցի ժամանակ:

Միհրան Փրկիչը տարիներ առաջ հայտնի էր որպես մուսուլման Սելահաթին Գյուլթեքին: Նա, քրիստոնյա դառնալով, մյուսներին է կոչ անում վերադառնալ, ասելով, որ արդեն հարմար ժամանակ է դրա համար եւ կարիք չկա թաքնվել: Նրա որոշ բարեկամներ բարկացել էին նրան ասելով, թե ինչու է իրենց գաղտնազերծում:

Միհրան Փրկիչը չպատասխանեց մեր հարցին, թե Թուրքիայում քանի մուսուլմանացած հայ կա: Նա ասաց, որ դա չի կարող ասել շեշտելով, թե ուզում է, որ մարդիկ արդեն չքաշվեն իրենց հայ լինելը հայտարարելուց: Նա ասում է, թե Դերսիմի բնակչության 75 տոկոսի արմատները հայկական են, որ նրանց մի մասը ալեիականություն է ընդունել, մի մասը քրդացել:

Միհրանը նշում է, որ ինքը 15 տարի BDP-ի համար աշխատել է, շեշտում, որ նրա ղեկավար կազմում իրենց մուսուլման ներկայացնող մեծ թվով հայեր կան: Նա օրինակ է բերում, որ BDP-ի հաղթած գրեթե բոլոր

հատվածներում 1923-ից առաջ հայեր են ապրել: Միհրանն ասում է նաեւ, որ PKK-ին չի համարում սահաբեկչական կառույց, այն ներկայացնելով որպես ժողովրդական շարժում»,-մեջբերում է Habervaktim-ի հրապարակումը Օղուզհան Օնեմը:

Արթուր Հակոբյան

Թուրքիայում Աղթամար կղզու հայկական եկեղեցում տեղի կունենա մկրտության առաջին արարողությունը



Օգոստոս 28, 2013 | 05:47

Թուրքական Վան նահանգում գտնվող Աղթամար կղզու վերջերս վերանորոգված հին հայկական եկեղեցում տեղի կունենա մակրտության առաջին արարողությունը: Մկրտությունը տեղի կունենա սեպտեմբերի ութին, ամենամյա Սուրբ Պատարագի ժամանակ: Այդ մասին է գրում թուրքական «Hürriyet Daily News»-ը: Թուրքիայից եւ արտասահմանից մեծ թվով հայեր պատրաստվում են գնալ Վանա լճի Աղթամար կղզում գտնվող 10-րդ դարում կառուցված Սուրբ Խաչ եկեղեցի, որպեսզի մասնակցեցն տարին մեկ անգամ անցկացվող արարողությանը: Թուրքական իշխանությունները 2005-2007թթ. ընթացքում վերազանգնել են եկեղեցին, հետո այն բացել են թանգարանի կարգավիճակով: 2010թ.-ին 95 տարի անց առաջին անգամ այնտեղ սուրբ պատարագ անցկացվեց:


Այս տարի սեպտեմբերի 8-ի պատարագի ժամանակ եւս պատմական եկեղեցում կանցկացվի մկրտության արարողության: Այդ մասին հաղորդել է Վանի նահանգի Մշակույթի եւ տուրիզմի վարչության ղեկավար Մուզաֆեր Ակգուրը: Նրա խոսքով, շարունակվող խաղաղ գործընթացների շնորհիվ այս տարի իրենք ալեի մեծ քանակի մարդկանց հոսք են սպասում:

Թուրքիայում հայ եղբայրները պայքարում են հետ ստանալ 140 տարի առաջ իրենց ընտանիքից խլված թանկարժեք գույքը

Սեպտեմբեր 01, 2013

Թուրքիայի Միվաս (Մեքաստիա) նահանգի Չաթալիբնարի շրջանում գտնվող եւ Համուրքեան են անունը կրող բնակավայրը հետ ստանալու համար Թուրքիայում ապրող 3 հայ եղբայրներ դատական հայց

են ներկայացրել Միվասի քաղաքացիական գործերով 2-րդ դատարան:



Թուրքական Milliyet-ի փոխանցմամբ՝ հայ եղբայրները պնդում են, որ 1870 թվականին իրենց ընտանիքին պատկանող հողատարածքն անօրինական կերպով խլվել է, ինչը հակասում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային:

Հայ եղբայրների փաստաբան Հիքմեթ Գյունգորը նշել է, թե հայ եղբայրները մշտապես իրեն տեղեկացրել էին, որ իրենց ընտանիքին պատկանած եւ այնուհետ ապօրինի կերպով խլված հողատարածք ունեն Միվասի Ուլաշի շրջանում, սակայն ինքը մտածել է, որ 1870 թվականին խլված գույքի համար դժվար է պայքարել:

Նրանք մի օր ինձ մոտ եկան մի քարտեզով, որտեղ պարզ երևում է ընտանիքի ազգանունով մի տարածք: Ուլաշում գնացի կադաստրի վարչություն եւ գտա ընտանիքի անունները հիշյալ վայրում: Մակայն նրանց պատկանող հողերը գրանցվել էին պետության վրա: Այնուհետ սկսեցինք դատական գործընթացը, -ասել է փաստաբանը: Միվասի քաղաքացիական գործերով 2-րդ դատարանի կողմից 2013 թվականի մայիսի 9-ին ընդունվել է դատական հայցը: Այն անցնում է սեփականության վկայականի ապօրինի ձեռքբերում գործի շրջանակներում: Դատարանը հայցն ընդունելուց հետո պահանջել է հայցվոր կողմից ներկայացնել սեփականության վկայականը, ընտանիքի անդամների գերեզմանների գրանցման վկայականը:

Հայ եղբայրների փաստաբանը նշել է, որ 1915-ին տեղի ունեցածներից հետո ընտանիքի մեծ մասը կորել է, ինչի պատճառով գերեզմանների տեղն անհայտ է:

Նշվում է, որ հայ եղբայրների պահանջած հողատարածքի շուկայական արժեքը կազմում է 20 մլն լիրա (10 մլն դոլար):

Հայերի եւ քրդերի գերեզմանները քանդողների գլուխը կջարդենք. քուրդ կուսակցապետ

Սեպտեմբեր 05, 2013 | 00:04

Թուրքիայի հարավային Մարդին նահանգի Նուսայբինի շրջանի լեռնային հատվածում գտնվող PKK-ի զինյալների գերեզմանների քանդման հետ կապված խիստ հայտարարությամբ է հանդես եկել քրդական «Խաղաղություն եւ ժողովրդավարություն»

կուսակցության (BDP) նախագահ Սելահաթին Դեմիրթաշը:


Թուրքական Milliyet-ի փոխանցմամբ՝ «Խաղաղություն եւ ժողովրդավարություն» կուսակցության նախագահ Սելահաթին Դեմիրթաշը, անդրադառնալով Մարդին նահանգի Նուսայբինի լեռնային հատվածում գտնվող քուրդ զինյալների գերեզմանների ավերմանը, ասել է. «Աշխարհի ոչ մի վայրում մինչ այժմ գերեզմանների դեմ հարձակումները ընդունելի չեն: Ինչ կրոնի կամ հավատքի ուզում է լինի, գերեզմանը սրբություն է:

Այդ գերեզմանների ավերման հետ կապված հայտարարում եմ, որ գերեզմանները քանդողների գլուխը կջարդենք: Շատ պարզ եմ ասում, ում գերեզմանն ուզում է լինի՝ հայի, քրդի, PKK-ականի կամ մահմեդականի, միեւնույնն է հարձակվողի դեմ մեր կուսակցությունը, ժողովուրդը հստակ վերաբերմունք ցույց կտա», -ասել է Դեմիրթաշը:



Նշենք, որ Նուսայբինի շրջանի Բագոկ լեռան վրա թաղված 43 քուրդ զինյալների գերեզմանները քանդվել են անհայտ անձանց կողմից եւ առեւանգել վերջին շաբաթվա ընթացքում թաղված քուրդ զինյալ Ահմեդ Ուդուրլուի դին:

Պատմական Աստվածաշունչը վերադառնում է Դիարբեքրի Սուրբ Կիրակոս եկեղեցի



Սեպտեմբեր 04, 2013 | 00:04

Դիարբեքրի հայկական Սուրբ Կիրակոս եկեղեցու վերանորոգման համար երկար տարիներ պայքարած

հայտնի գրող Մկրտիչ Մարկոսյանը հայտնել է, որ ցանկանում է Սուրբ Կիրակոսին վերադարձնել տարիներ առաջ հայտնաբերված պատմական Աստվածաշունչը:

Ստամբուլի հայկական Ակոսի փոխանցմամբ՝ դիարբեքիրցի հայ գրող Մկրտիչ Մարկոսյանը պատմել է, որ Աստվածաշունչը գտնվել է 2001 թվականին, երբ Սուրբ Կիրակոսի կիսափուլ վիճակում էր գտնվել: Նա նշել է, թե Աստվածաշունչը գտել են զուգարանի թղթերի համար թափված թղթերի կույտի մեջ:

Մկրտիչ Մարկոսյանի խոսքով գտնված Աստվածաշունչը տպվել է 1690 թվականին, Վենետիկում: Աստվածաշունչը գտնվելուց ի վեր, ես այքի լույսի պես եմ այն պահել: Երբ իմացա Դիարբեքիրի Սուրբ Կիրակոս եկեղեցու մի հատվածում հայերին վերաբերվող թանգարան է ստեղծվում, որոշել են այն Դիարբեքիր տեղափոխել, ասել է Մկրտիչ Մարկոսյանը:

Նշենք, որ Դիարբեքիրի քաղաքապետարանը Սուրբ Կիրակոս եկեղեցու մի մասը դարձնելու է թանգարան, իր միջոցներով ապահովելու է հայերին պատկանած ցուցանմուշների ձեռքբերմանը, ինչպես նաև զբաղվելու է այդ տարածքի խնամքով եւ պահպանությամբ:

Վանում սկիզբ դրվեց հայ-թուրք երիտասարդ գործարարների միջև նոր համագործակցության .

գրանիտի, մարմարի, ասֆալտի, բետոնի գործարաններ, փորձեց հասկանալ տեղի երիտասարդ արտադրողների հնարավորությունները:



«Նման գործարար այցերի ժամանակ առավել սերտ կուսումնասիրվի Վանի տեղական շուկան, համատեղ ուժերով կփորձվի ուղիներ գտնել հայկական և թուրքական շուկաների միջև ապրանքափոխանակման պայմանների ստեղծման համար, որը հետագայում երկու երկրների միջև առևտրատնտեսական հարաբերությունների զարգացման համար պարարտ հող կնախապատրաստի», - նշեց Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միության ծրագրերի համակարգող Արմեն Մելքոնյանը՝ հավելելով, որ հասարակական կարծիք ձևավորելու, ինչպես նաև գործընկերային հարաբերություններ զարգացնելու առումով շատ էական են նմանատիպ այցելությունները, այդ իսկ պատճառով անհրաժեշտ է լինել հետևողական և համատ քայլերով շարժվել առաջ: Անհատական հանդիպում-բանակցությունների ընթացքում երկու երկրների գործարարների մի մասը նախնական պայմանավորվածություններ է ձեռք բերել երկկողմ համագործակցության վերաբերյալ:



Օգոստոս 24, 2013 | 06:36

Օգոստոսի 16-ին եւ 17-ին Վան քաղաքում շարունակվեցին Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միության նախաձեռնությամբ իրականացված հայ-թուրքական գործարար համաժողովի աշխատանքները: Համաժողովի շրջանակներում գործարար ոլորտի հայ երիտասարդ ներկայացուցիչները շարունակեցին ակտիվ շփումներն իրենց թուրք գործընկերների հետ: Տեղի ունեցան անհատական գործարար հանդիպում-բանակցություններ, որոնց ընթացքում հայ գործարարներն այցելեցին Վանում տեղակայված տարբեր ձեռնարկություններ, գործարաններ՝ տեղի արտադրությանը և բիզնես հնարավորություններին ծանոթանալու նպատակով: Հայկական կողմը ներկա գտնվեց Վանում կաթնամթերքի, քաղցրավենիքի արտադրության ձեռնարկություններում, այցելեց



Օրվա վերջում, նախատեսվածի համաձայն, «Երևանի և հարակից մարզերի երիտասարդ գործատուների միության» (նախագահ՝ Մուշեղ Ավետիսյան) և «Վանի երիտասարդ գործարարների միության» (նախագահ՝ Էրեն Գոքչենայ) միջև ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր, որով երկու կողմերի երիտասարդ

գործարարների միջև համագործակցության նոր հարթակի հիմք դրվեց:



Հիշեցնենք, որ եռօրյա գործարար համաժողովն իրականացվել է «Երիտասարդ գործարարները միջսահմանային տնտեսական համագործակցության համար» ծրագրի շրջանակներում, որի հիմնական նպատակն է աջակցել Հայաստանի և Թուրքիայի միջև տնտեսական հարաբերությունների զարգացմանը, երկու երկրների գործարար երիտասարդների միջև համագործակցության ստեղծմանն ու խթանմանը:

Հավելենք, որ օգոստոսի 15-ին՝ պլենար հանդիպմանը նվիրված համաժողովի մեկնարկի օրը, Հայաստանի և Թուրքիայի երիտասարդ գործարարների միջև կլոր սեղանի շուրջ հետաքրքիր քննարկումներ են ծավալվել երկկողմ առևտրատնտեսական կապեր հաստատելու հնարավորությունների և նախադրյալների, ինչպես նաև վերջիններիս առնչվող խոչընդոտների ու արգելքների վերաբերյալ: Համաժողովի ժամանակ հայկական պատվիրակության կողմից նշվեց, որ Վան հասնելու համար անցել են մոտ 900 կմ՝ ծախսելով 16 ժամ, մինչդեռ Վան-Երևան-Վան չվերթի գործարկման դեպքում հնարավոր էր էականորեն կրճատել ժամանակը՝ հասցնելով այն ընդամենը 40 րոպեի:

Միջազգային

ԱՄՆ-ի ու Իրանի մերձեցման տեմպերի առնչությամբ մի շարք պետություններ անհանգստություն են հայտնում

ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման միջոցառումներ է ընդունում՝ բարելավելու հարաբերությունները Իրանի և Մերձավոր Արևելքի արաբական պետությունների միջև՝ գրում է *The Wall Street Journal*-ը:

Ամերիկացի պաշտոնատար անձինք խոստովանում են, որ Պարսից ծոցի երկրները, մասնավորապես՝ Սաուդյան

Արաբիան, ԱՄԷ-ն և Բահրեյնն անհանգստացած են Իրանի հետ ԱՄՆ-ի մերձեցմամբ: Արաբական երկրներն անհանգստանում են այն պատճառով, որ Իրանը կարող է օգտվել Վաշինգտոնի հետ իր բարելավվող հարաբերություններից՝ Մերձավոր Արևելքում գերիշխելու համար:



Իսրայելն ու Պարսից ծոցի մի շարք դաշնակից պետություններ անհանգստություն են հայտնում ԱՄՆ-ի ու Իրանի մերձեցման տեմպերի առնչությամբ՝ հաստատելով, որ վերջինս կկիրառի դիվանագիտական քողը՝ իր միջուկային աշխատանքները խթանելու համար:

Իրանի նոր նախագահ Հասան Ռուհանին բազմիցս հերքել է այդ ենթադրությունը:

Իսրայելի վարչապետ Բենիամին Նեթանյահուն այսօր ԱՄՆ-ում կհանդիպի Բարաք Օբամայի հետ: Նեթանյահուն հայտարարել է, որ կօգտվի ԱՄՆ այցելելու առիթից ու կպատմի ողջ ճշմարտությունն իրանական միջուկային ծրագրի վերաբերյալ: Հանդիպման նախապատրաստություններով զբաղվող պաշտոնյաների խոսքով՝ Օբաման հանդիպմանը կհայտնի, որ ԱՄՆ-ը որոշումներ կընդունի Իրանի գործողությունների փոփոխության դեպքում, ոչ թե հռետորաբանության հիման վրա:

Իսրայելը պատրաստ է միայնակ պայքարել Իրանի միջուկային ծրագրերի դեմ. Նեթանյահուն 01.10.13



Իսրայելը չի հանդուրժի Իրանի մոտ միջուկային զենքի հայտնվելը և պատրաստ է միայնակ դիմակայել այդ սպառնալիքին. հայտարարել է Իսրայելի վարչապետ Բենիամին Նեթանյահուն:

Իսրայելի առաջնորդներն անվստահությամբ են վերաբերվում Իրանի նոր նախագահ Հասան Ռոհանիի խաղաղասիրական հռետորաբանությանը:

«Իսրայելը Իրանին թույլ չի տա միջուկային զենք ստեղծել: Եթե Իսրայելը միայնակ մնա, միայնակ կկանգնի», -ասել է Նեթանյահուն՝ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի ընթացքում:

Իսրայելը չի կարծում, որ Իրանի միջուկային ծրագրերը կդադարեն Ռոհանիի պաշտոնավարումից հետո: «Իրանը խաղաղ միջուկային ծրագիր չի իրագործում», -ասել է նա հավելելով, որ Իրանի նոր առաջնորդի գալը ոչինչ չի փոխել:

«Անցյալ տարի Իրանը երեք տոննա ուրան է հարստացրել՝ մինչև 3,5%, և տեղծել է հազարավոր ցենտրիֆուգներ՝ ներառյալ ամենաժամանակակից: Ռոհանիի հաղթանակից հետո այդ ջանքերը շարունակվում են», -ասել է Նեթանյահուն:

Թուրքիան փորձարկել է սեփական արտադրության առաջին ուսումնական օդանավը

Օգոստոս 30, 2013 | 13:07



Թուրքիայում օգոստոսի 29-ին տեղի է ունեցել TAI ընկերության կողմից մշակված Hurkus նոր ուսումնական օդանավի առաջին թռիչքը: Օդանավի փորձարկումները անցկացվել են Անկարայից ոչ հեռու՝ Ակինցիլար ավիաբազայում: Hurkus-ի թռիչքը շարունակվել է 33 րոպե եւ հաջող է համարվել: Առաջին թռիչքի ընթացքում օդանավը 2,9 հազար մետր վեր է բարձրացել:

Hurkus-ի մշակումն իրականացվում է 2006թ: Այն նախատեսված է 35 տարի ծառայելու համար: Այս մասին հաղորդում է «Lenta.Ru»-ն՝ վկայակոչելով Jane`s-ին:

Շասարակակամ

ԱՐԵՎՍՏԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԿԱՆԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆ
GOVERNEMENT
D'ARMENIE
OCCIDENTALE



BATI ERMENISTAN
HUKUMETI
ПРАВИТЕЛЬСТВО
ЗАПАДНОЙ АРМЕНИИ

Միրիահայության ապագան. Թուրքիայի զինված ուժերի ներկայության խնդիրը

Միրիահայության ապագան սերտորեն կապված է ռազմա-քաղաքական հետեյալ ուժերի կողմնորոշումներից ու քայլերից՝ Միջազգային ընկերակցության, սիրիական ընդդիմության, Թուրքիայի զինված ուժերի, հայության եւ Հայաստանի Հանրապետության:

Թուրքիայի ներկայի քաղաքական վերնախավը չեն համեմատի երիտթուրքերի հետ: Ժամանակակիցները իրավացիորեն ավելի շրջահայաց ու զգուշավոր են եւ դա է պատճառը, որ արեւմուտքին, մասնավորապես ԱՄՆ-ին 2008 թ. ի վեր, ոչ մի կերպ, չի հաջողվում նրանց ներքաշել Միջին Արեւելյան ռազմա-քաղաքական ավելի ակտիվ ու վտանգավոր գործողությունների հորձանուտը: Բայց ինչպես ասում են. «Մեծ ցանկության դեպքում այժից էլ կարելի է լարախաղաց պատրաստել»: Հնարավոր է, որ այդ ջանքերը հաջողություններ արձանագրել են, ինչի վկայությունը Միրիայի սահմանին Թուրքիայի ռազմական օդանավի միջադեպն է:

Հնարավոր է, որ թուրքական քաղաքական վերնախավը ռիսկի է դիմում: Իսկ ռիսկը շատ մեծ է, որովհետեւ այսօր աշխարհում բոլորին է հասկանալի, որ Միրիան ջրբաժան է հին ու նոր աշխարհակարգերի միջեւ, ընդ որում՝ նորի հաստատումը հնարավոր է Միրիայում ներկայի իշխող վարչակարգի անկումից հետո միայն:

Ռիսկը մեծ է նաեւ այն պատճառով, որ իրականում Թուրքիայի զինված ուժերը Միրիային եւ սիրիահայությանը սպառնում են այն տարածքներից, որտեղ նրանք, ըստ էության, իրավունք չունեն լինելու, այսինքն՝ Արեւմտյան Հայաստանից եւ Կիլիկյան Հայաստանից:

1878 թ. տեղի ունեցած Սան-Ստեֆանոյի եւ Բեռլինի համաժողովների, ինչպես նաեւ 1895 թ. Մայիսյան բարենորոգումների ծրագրի պահանջների համաձայն՝ Օսմանյան Թուրքիան պարտավորվում էր բարենորոգումներ իրականացնել Արեւմտյան Հայաստանում եւ Կիլիկիայում: Փոխարենը, թուրքական երեք իրար հաջորդող կառավարություններ՝ օսմանական, երիտթուրքական, քեմալական, ցեղասպանություն եւ բռնագաղթ իրականացրին Հայաստանում:

- 1918 թ. հոկտեմբերի 30-ին Դաշնակիցների եւ Թուրքիայի միջեւ կնքված Մուղրոսի զինադադարի 16-րդ հոդվածի համաձայն՝ Թուրքիան պարտավորվում էր

իրականացնել. «Հեջասի, Ասիրի եւ Եմենի, Սիրիայի եւ Միջագետքի բոլոր կայագրորների հանձնումը դաշնակցային հրամանատարությանը...», Թուրքական գործերի դուրս բերումը Կիլիկիայից»:

1920 թ. Նոյեմբերի 22-ից հետո, ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի կայացրած Իրավարար վճռի համաձայն՝ թուրքական զինված ուժերը պարտավոր էին դուրս գալ Արեւմտյան Հայաստանի չորս վիլայեթներից:

2011 թ. Մարտի 29-ին Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհուրդը որոշում ընդունեց «Արեւմտյան Հայաստանի հայերի եւ Արեւմտյան Հայաստանի Մշտական, զինված, դրական չեզոքության մասին», ինչը նշանակում է, որ թուրքական զինված ուժեր չեն կարող լինել նվազագույնը վիլսոնյան Իրավարար վճռով Հայաստանին հատկացված այդ տարածքներում:

Ստացվում է ամբողջովին հակաիրավական եւ անօրինական մի գործընթաց, երբ թուրքական զինված ուժերը

ա) արդեն շուրջ 92 տարի է, ինչ բռնազավթված են պահում Արեւմտյան Հայաստանը եւ Կիլիկյան Հայաստանը,

բ) երբ այդ նույն բռնազավթված տարածքներից մի նոր ագրեսիայի սպառնալիք են ստեղծում տարածաշրջանի ժողովուրդների եւ երկրների համար:

Բնական է, որ ամբողջովին հակաիրավական եւ անօրինական այս գործընթացը հարկադրելու է սկսել միանգամայն իրավական եւ օրինական գործընթաց, որի նպատակն է լինելու թուրքական զավթիչ ուժերի դուրս բերումը Հայաստանի բռնազավթված տարածքներից, մասնավորապես Արեւմտյան Հայաստանից եւ Կիլիկյան Հայաստանից:

Արեւմտյան Հայաստանի Վտարանդի Կառավարությունը իր ուշադրության կենտրոնում է պահում տարածաշրջանում ընթացող ռազմա-քաղաքական գործընթացները եւ, ի հարկին, չի հապաղելու միջամտել, երբ դրանք կրկին ստանան ագրեսիայի ու անօրինականության մի նոր գործընթացի հանգամանք եւ, մասնավորապես, վտանգեն հայության եւ Հայաստանի ապագան ու զարգանալու իրավունքը:

Արեւմտյան Հայաստանի Վտարանդի Կառավարություն
24.06.2012 թ.

Նեոսամանիզմն ու «Եվրասիական» դոկտրինն ընդդեմ հայերի

Իգոր Մուրադյան

24 Սեպտեմբերի 2013, Iragir.am

Նեոսամանիզմը որպես արտաքին քաղաքական դոկտրին առաջ է քաշել Թուրքիայի նոր էլիտան, որպես ժամանակակից աշխարհում առավել հավակնոտ դոկտրիններից մեկը: Որոշ իմաստով նեոսամանիզմն իրականացվում է Ռուսաստանի ղեկավարության առաջ

քաշած դոկտրինին զուգահեռ, որը չզիտես ինչու կոչվում է Եվրասիական:



Ինչպես եւ Թուրքիայում, Ռուսաստանում այս նոր դոկտրինի նախաձեռնողը նոր էլիտան է (պատմական համատեքստում), որը մոտիվացված է ավելի շուտ անձնական եւ խմբային շահերով, քան իրապես կայսերական: Ընդ որում, նպատակին հասնելու համար կիրառվում են ցանկացած, այդ թվում ուժային հնարքներ, քաղաքական շանտաժ եւ բավական ագրեսիվ քարոզչություն:

Այդ հավակնություններն այնքան էլ պոպուլյար չեն, սակայն կառուցվում են եւ հաշվարկված են արմատական պոպուլիզմի վրա: Ըստ ամենայնի, երկու դոկտրիններն էլ բախվել են նույնատեսակ խնդիրների եւ հակազդեցության:

Հայաստանը պետք է առավել ուշադիր հետեւի ու արձագանքի Թուրքիայի ու Ռուսաստանի այդ նկրտումներին, քանի որ Հայաստանի համար պահպանվում է ավանդական ու իրական սպառնալիքը՝ գործարք եւ բաժանում այդ պետությունների միջև:

Թուրքիան հնարավորություն ունեցավ զգալ սեփական տարածաշրջանային քաղաքականության տապալումը եւ հասկանալ, որ ԱՄՆ հետ դիմակայության ռեժիմում չի կարող հասնել իր նպատակներին եւ նույնիսկ պահպանել նախկին դիրքերը: Թուրքիան կանգնել է տնտեսական նոր ճգնաժամի հեռանկարի առջեւ եւ խիստ մտահոգ է, որ ԱՄՆ-ն եւ Մեծ Բրիտանիան, ինչպես 1999 թ., կփլուզեն թուրքական տնտեսությունը նախկին սցենարով:

ԱՄՆ-ն Թուրքիայի շուրջ ձեռնարկել է նոր հակամարտություններ եւ ծայրահեղ անբարենպաստ իրավիճակ եւ հասել իր նպատակին: Թուրքիան ընդունել է ամերիկյան պայմանները եւ բավարարվելու է տարածաշրջաններում իր ավելի համեստ դերին, հուսալով առավել բարենպաստ իրավիճակի առաջացմանը:

ԱՄՆ եւ Թուրքիայի հարաբերություններում ներկայումս զգալիորեն նվազել են լարվածությունն ու դիմակայությունը: Մակայն դրա պատճառը ԱՄՆ որեւէ զիջումները չեն: Ամերիկացիներն իսկապես Թուրքիային առաջարկել են շատ բան, սակայն նաեւ պահանջել են զգալի զիջումներ: Եթե ամբողջացնենք Թուրքիայի

զիջումները՝ դրանք հանգեցրել են նրա տարածաշրջանային հավակնությունների սահմանափակմանը:

Թուրքիան ամեն կերպ խուսափում էր Ռուսաստանի հետ հարաբերության վատթարացումից, ձգտելով նրան տալ սեփական թիկունքի դեր: Սակայն ամերիկացիները հասկանում էին, որ թուրքական հավակնություններն ու պահանջները Մեծ ծովյան-կովկասյան տարածաշրջանում, այսպես թե այնպես, կհանգեցնեն Ռուսաստանի հետ դիմակայության: Իրական դիմակայություն առայժմ չկա, սակայն անկասկած է, որ Ռուսաստանը զգուշանում է դրանից:

Ըստ ամենայնի, ԱՄՆ-ն ներկայում շահագրգռված է Մեծ ծովի եւ Կովկասի ուղղությամբ թուրքական էքսպանսիայի վերակողմնորոշմամբ, ինչը մշտապես դիտարկվել է իբրև Թուրքիային շեղելու, եւ գլխավորը՝ Ռուսաստանի հետ նրա բախման պահեստային տարբերակ:

Սակայն ԱՄՆ առջեւ դրված է ոչ միայն թուրքական էքսպանսիայի ուղղությամբ Ռուսաստանի քաղաքականությունն ակտիվացնելու խնդիրը: ԱՄՆ ինքը պետք է զբաղվի նաեւ Հարավային Կովկասում Թուրքիային զսպելու հարցերով: Այստեղ առաջանում է հայկական գործոնների ամբողջությունը՝ ցեղասպանության ճանաչման, հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման, Ղարաբաղի, Ջավախքի եւ Հարավային Վրաստանի հայերի, Հայաստանի ներքաղաքական պայքարի հարցերը:

Այսպես թե այնպես, Հարավային Կովկասում խնդիրներն ակտիվացվում են, սակայն ոչ թե իրական քաղաքականության ռեժիմով, այլ քարոզչության եւ պսևտոմտադրությունների ձեռնարկով: Այսպիսով, Թուրքիային հասցնելով «զիջումների» ու «շփոթվածության» վիճակին, ամերիկացիները փորձում են նրան վերահսկողության տակ պահել:

Թուրքիան գործնականում զերծ մնաց Մեծ ծովում ԱՄՆ մտադրությունների վերաբերյալ մեկնաբանություններից ու հայտարարություններից, համաձայնվեց չմիջամտել Հարավային Կովկասում եւ Իրաքում, ինչպես նաեւ ուժային միջամտության բացառմանը Սիրիայում: ԱՄՆ-ն իր կողմից աջակցեց Թուրքիային ռազմատեխնիկական ոլորտում:

Իհարկե, Թուրքիան դեռ իր վրա ուշադրություն կհրավիրի որպես սեփական հավակնությունները ցուցադրող պետություն, սակայն չի կարելի չհամաձայնվել ամերիկյան քաղաքագիտության ռահվիրայի հետ՝ «Թուրքիան, իհարկե, կվերադառնա, սակայն հարցն այն է, թե ինչպես կվերադառնա՝ սպիտակ ձիով վրա՞, թե սողալով...» (ասել է Վաշինգտոնում անձնական զրույցի ժամանակ):

Այս ամենով հանդերձ, Թուրքիան ազդանշաններ է ուղարկում Հայաստանի հետ հարաբերությունները «կարգավորելու» մտադրությունների վերաբերյալ, ընդ որում՝ պետական առաջին դեմքերի մակարդակով: Կասկած չկա, որ դա ամերիկա-թուրքական

համաձայնությունների շրջանակում է, եւ ԱՄՆ մտադիր է շարունակել ուժեղացնել Թուրքիայի վրա վերահսկողության ու ճնշման լծակները:

Ամերիկացի զինվորները չեն ցանկանում ընդգրկվել բանակում՝ ուրիշ երկրներ օկուպացնելու համար

02/09/2013 17:41:00 1 in.am

Տառաչափ - +



ԱՄՆ ՋՈւ սպայական կազմի շարքերում աճում է դժգոհությունը Սիրիայի դեմ առաջիկայում անցկացվելիք ռազմական օպերացիայի առնչությամբ:

Շատ զինձառայողներ փակել են իրենց դեմքը ցուցապաստառով, որի վրա գրած է՝ «Մենք չենք ցանկանում պատերազմել Սիրիայում», «Մենք չենք ընդգրկվել բանակում՝ ուրիշ երկրներ օկուպացնելու համար»: Նրանք այդ լուսանկարները տարածել են սոցցանցերում:

Մինչ ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման դիտարկում է Սիրիա ներխուժման տարբերակները, ամերիկացիներն իրենց դժգոհությունն են հայտնում նրա կառավարման դեմ:

Քաղաքացիների 41 տոկոսը դժգոհ է ԱՄՆ արտաքին քաղաքականությունից: CBS հեռուստաալիքի անցկացրած հարցման արդյունքներով՝ ամերիկացիների կեսը կարծում է, որ ԱՄՆ-ը չպետք է մարտական գործողություններ անցկացնի Սիրիայում: 42 տոկոսը կողմ է ներխուժման գաղափարին, իսկ 8 տոկոսը դեռևս չի կողմնորոշվել:

Մշակույթ

Նա աշխարհին ներկայացրել է 70 ժողովուրդների երգն ու պարը իր բեմական կյանքի 50 տարիների ընթացքում

02 Սեպտեմբերի 2013



Այս տարի լրանում է հայ երգչուհի և մենապարուհի Արև Բաղդասարյանի ծննդյան 100-ամյակը, ով միջին և ավագ սերնդի հանդիսատեսին ավելի հայտնի է «Լարաբաղա նախշուն բաջի» անունով:

Մեծանուն երգչուհին ծնվել է 1913 թ ապրիլի 2-ին Շուշիում; Ավարտել է Բաքվի տնտեսագիտական ինստիտուտը:

1936թ. Դոնի Ռոստովի երգի և պարի օլիմպիադայում գրավել է առաջին մրցանակ:

1937թ. ավարտել է Բաքվի ժողովրդական պարի անսամբլը և դարձել մենապարուհի:

1938թ. Մոսկվայում Ա.Բահալյանը, նկատելով աղջկա տաղանդը, համառորեն պնդել է տեղափոխվել Հայաստան:

1942թ. դարձել է Հայաստանի պետական ֆիլհարմոնիայի մենակատար: Հայրենական մեծ պատերազմի տարիներին երգ ու պարով ոգեշնչել է 89-րդ հայկական Թամանյան դիվիզիայի մարտիկներին:

1946թ-ից աշխատել է Արտեմի Այվազյանի ղեկավարած ջազ նվագախմբում և ելույթներ ունեցել Խորհրդային Միության բազմաթիվ քաղաքներում և արտերկրում՝ Վիետնամ, Բիրմա, Չինաստան, Բելգիա, Լյուքսեմբուրգ, Ֆրանսիա, Ինդոնեզիա, Նեպալ, Հնդկաստան, Պակիստան, Բելյուրթ, Եգիպտոս, Կանադա: 1981 և 1991թթ հյուրախաղերով հանդես է եկել Վաշինգթոնում: Արտիստուհու հեղինակած ամենասիրված երգերից էր «Նախշուն բաջի»-ն:

1955-87թթ եղել է «Բարեկամություն» երգի և պարի անսամբլի գեղարվեստական ղեկավարը: Բեմական գործունեության 50 տարիների ընթացքում կատարել է աշխարհի մոտ 70 ազգերի տասնյակ երգեր ու պարեր: 1961թ. արժանացել է ՀԽՍՀ ժողովրդական արտիստի

կոչմանը: Սահացել է Երևանում 1994թ. փետրվարի 17-ին:

Արսեն Լևոնյան
HayNews.am

**Մամլո հաղորդագրություն
«Առաջին համաշխարհային
պատերազմի Կովկասյան
ճակատը» խորագրով
միջազգային գիտաժողով տեղի
կունենա Երևանում 2014-ին**

Երևան, 23.08.2013 ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը 2014թ. ապրիլի 20-ից 22-ը Երևանում կազմակերպում է «Առաջին համաշխարհային պատերազմի Կովկասյան ճակատը: Ցեղասպանություն, փախստականներ և մարդասիրական օգնություն» խորագրով միջազգային գիտաժողով, որը նվիրված է Առաջին համաշխարհային պատերազմի հարուրամյակին:

Գիտաժողովի նպատակն է անդրադառնալ Առաջին համաշխարհային պատերազմի Կովկասյան ճակատում ռազմական գործողությունների զարգացման վերաբերյալ անհայտ աղբյուրներին, ռազմական գործողությունների թատերաբեմում փախստականների առկայությանը, պատերազմական իրավիճակում Օսմանյան կայսրության և նախկին Ռուսական կայսրության տարածքում հայ ազգաբնակչության նկատմամբ ցեղասպանության իրագործման դրվագներին:

Գիտաժողովի ընթացքում դիտարկվող հարցերը կներառեն հետևյալ թեմաները՝

- Պատերազմ և ցեղասպանություն;
- Ռուս զինվորականները որպես ցեղասպանության վկաներ;
- Զինվորական լուսանկարիչները և “մոռացված պատերազմի” Կովկասյան թատերաբեմի կինոժամանակագրությունը;
- Պատերազմ և գիտություն. հնագիտական և ազգագրական հետազոտությունները Հայաստանի տարածում պատերազմի ընթացքում;
- Հանցագործություն ընդդեմ մարդկության և քաղաքակրթության;
- Ռազմագերիների և անհայտ կորածների կարգավիճակը և ճակատագիրը;
- Պատերազմը և կամավորական շարժումը;
- Մարդասիրական օգնությունը և փախստականները;
- Բարեգործությունը Կովկասյան ռազմաճակատում


Երիտթուրքական կառավարությունը, օգտվելով Առաջին համաշխարհային պատերազմի ընձեռած հնարավորությունից, իրագործեց նախապես ծրագրած Հայոց ցեղասպանությունն ոչ միայն Արևմտյան Հայաստանի, այլև Օսմանյան կայսրության ողջ տարածքում, ինչպես նաև Կովկասի և Հյուսիսային Իրանի որոշակի շրջաններում: Կոտորածների ու բռնագաղթի ենթարկվեց նաև տարածաշրջանի հույն, ասորի և եզդի բնակչությունը:

Արաք



Միրղատ Մարտիրոսյան

Լուսապատկերներ Միջոցառումներից Աշակերտներից, Ուսուցչական կազմերի նաև Արաք քաղաքի հայոց ազգային դպրոցի հիմնարկներից



Ազգային դպրոցի մարզահանդես, 16 յուլիս 1939 թ. Սուլթանաբադ:



Արաքի Ազգ. Դպրոցի ուսչական կազմը 1935 թ. Չախից աջ Օրդ. Էմմա Ներսեսյան, Պարոնայք Արշալիր կազանչեան, Անուշավան Գրիգորեան, Աղայ Ռասթե, Պրն.Արմենակ Մաքսապետեան, Պարսիկ ուսուցիչ, Տիկ. Միրանուշ Աղաբեգեան, Պրն. Գազիկ Բարխուդարեան, և օրդ. Աստղիկ:

Հարգանք ձեր անմոռաց յիշատակին



Տարագահանդես: Ա. Մաքսապետեան և շրջանաւարտից միութիւն:



Սուլթանաբադի Ազգ. դպրոցի ուսուցիչներն ու աշակերտները (1932 Յունիս 14):



1933 թ. Մայիս

Մեր ժամանակահատվածում ուսուցիչ-աշակերտ յարբաբերություններ լրիւ տաբեր էր: Աշակերտ - ուսուցիչ բացի դպրոցական աշխատանքները մասամբ տեղեակ էին իրար արդ դպրոցական կեանքից, թէ որտեղ են ապրում, անգամ ինչպէս են ապրում: Տօն օրերի առնչութեամբ ուսուցիչների տուն շնորհավանքի էինք գնում: Լաւ յիշում եմ նոր տարւայ տօնը շնորհաւորանքի առիթով ընկերներինով, օր. էմանէց և պրն Մաքսապետեանէնց Տուն ենք գնացել:



Արաք քաղաքի Հայ սկաուտական կազմակերպութիւն տեղծելու անդրանիկ քայլը, կամ ստեղծելու միտքը պատկանում է Նոր Զուղայի, հայ սկաուտների հիմնադիր, ղեկավար սկաուտապետ Յովսէփ Աբգարեանին: Կալկաթայի Մարդասիրական Ճեմարանի այս շրջանաւարտը, այդ օրերին ուսուցչական

պաշտօն էր վարում Սուլթանաբադի հայոց դպրոցում: Նա, վերոյիշեալ կազմակերպութիւնը ստեղծելու նպատակով մի շրջաբերական-բացատրագիր է

խմբգրում և յղում մի շարք ծնողների, այնտեղ արծածելով իր միտքերն ու ծրագիրը, ներկայացնելով սկաուտական շարժման օգտակարութիւնը, հայ մանուկների դաստիարակական գործում:

Սուլթանաբադ, 26 Յունւարի, 1924 թ.

Անխոնջ սկաուտապետը, քաջ տեղեակ լինելով սկաուտիզմի շինարար շարժումից, որպիսի հայ մանուկներ անմաս չմնան նման առիթից, մանրամասը ներկայեացնելով սկաուտիզմի կարևորութիւնը և նպատակը, դիմում է ծողներին, միկիկ միկիկ ստանալու նրանց ընդունելութիւնը կամ էլ մերժումը:

